

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ՃԱՆՁՆԱՆՔ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՄԻՋՈՑԱԻ
(ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ)

ՊԵՐՈՎԻԶ
2009

պարապ

ԱՅՍ ՕԳՏԱՇԱՏ ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ
ՍՐՏԱԲՈՒԽ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲԸ՝
ԱԶՆՈՒԱՇՈՂ ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍ ՍԱՐԵԱՆԻ
ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻԻ ՄԸ
ՈՐՈՆՔ ԿԸ ՀԱԻԱՏԱՆ
ՀՈԳԵԻՈՐ ԳԻՐՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԵԻՈՐՈՒԹԵԱՆ:
ՍՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻԻՆ
ՄԵԿԵՆԱՍՆԵՐՈՒՆ
ՁԵՐ ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ ԸԼԼԱՅ
ԵՒ ՏԵՐԸ ԱՌԱՏՕՐԷՆ ՕՐՀՆԷ ՁԵԶ
ԻՐ ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՐԳԵԻՆԵՐՈՎ

ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍ ՍԱՐԵԱՆ
ՍՈՅՆ ԳԻՐՔԸ ԿԸ ՆՈՒԻՐԷ
Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ԹԱՆԿԱԳԻՆ ՄՕՐԸ՝

ՄԱՐԻԱՄ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ»

պարապ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

1.– Աստուածաշունչին մասին	7
2.– Յիսուսի ծննդեան վերաբերեալ	13
3.– Յիսուսի հրաշքներուն վերաբերեալ	16
4.– Տասներկու առաքելներուն մասին	19
5.– Աւետարանիչներուն վերաբերեալ	24
6.– Աւետարաններուն վերաբերեալ	27
7.– Յիսուսի երկրաւոր կեանքի վերջին օրերուն վերաբերեալ	30
8.– Հարցումներ Գործք Առաքելոցէն	35
9.– Հարցումներ Պօղոս Առաքելի նամակներուն վերաբերեալ	40
10.– Ստեղծագործութենէն մինչեւ Իսահակ	43
11.– Նահապետական ժամանակաշրջանը	45
12.– Անապատային թափառումներու ժամանակաշրջանը	48
13.– Դատաւորներուն վերաբերեալ	51
14.– Թագաւորներուն վերաբերեալ	54
15.– Մարգարէներուն վերաբերեալ	58

16.– Տանարին վերաբերեալ	67
17.– Երբայեցիներուն թագաւորութեան վերաբերեալ	70
18.– Թագաւորութեան անկումէն մինչեւ Պաղեստինի գրաւումը	72
19.– Ուխտի Տապանակին վերաբերեալ	74
20.– Ընդհանուր հարցումներ	77
21.– Տուէ՛ք իմաստը հետեւեալ բառերուն	84
22.– Ընտրեցէ՛ք շիտակ պատասխանը	88
23.– Բացատրեցէ՛ք հետեւեալ բառերը	92

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

1.- Աստուածաշունչին մասին

1.- Ի՞նչ կը հասկնանք «Աստուածաշունչ» ըսելով:

- Կը հասկնանք Աստուծոյ շունչով, այլ իսո՞ւրով՝ Սուրբ Հոգիով գրուած Սուրբ Գիրքերը:

2.- Ուրկէ՞ առնուած է Աստուածաշունչ բացատրութիւնը:

- Առնուած է նոյնիմֆն Աստուածաշունչէն. «*Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ Գիրքերը օգտակար են...*» (Բ.Տմ 3.16):

3.- Ե՞րբ տեղի ունեցած է Հայերէն Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը:

- 1666-ին, Հոլանտայի Ամսթերտամ քաղաքին մէջ:

4.- Որո՞ւ հսկողութեամբ տեղի ունեցած է Հայերէն Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը:

- Երեւանցի Ոսկան Վարդապետի հսկողութեամբ:

5.- Ո՞վ եւ ո՞ր թուականին կատարած է Հին եւ Նոր Կտակարաններու գլուխներու բաժանումը:

- Անգլիացի Եպիսկոպոս՝ Ստեփան Լանկտոն (Stephan Langton), 1226 թուականին:

6.- Ուրիշ ո՞վ կատարած է Նոր Կտակարանի գլուխներու բաժանումը:

- Հուկո Տէ Սանթթօ Քարօ (Hugo De Sancto Caro) անունով Հռոմայեցի կարտինալ մը, 1240 թուականին:

7.- Ո՞վ կատարած է Հին Կտակարանի համարներու բաժանումը:

- Մուրթէ Նաթան անունով Եբրայեցի մը, 15-րդ դարուն:

8.- Ո՞վ կատարած է Նոր Կտակարանի համարներու բաժանումը:

- Ռոպէր Էսթիէն (Robert Estienne) անունով ֆրանսացի տպագրիչ մը, 1551 թուականին:

9.- Ե՞րբ տեղի ունեցած է Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը գլուխներով եւ համարներով:

- 1551 թուականին:

10.- Ի՞նչ լեզուով Յիսուս կատարեց իր քարոզութիւնները:

- Արամերէնով:

11.- Ի՞նչ լեզուով աշակերտները գրի առին Նոր Կտակարանը:

- Յունարէնով:

12.- Ինչո՞ւ աշակերտները Նոր Կտակարանը գրի առին Յունարէն լեզուով:

- Որովհետեւ Յիսուսի ժամանակ Յունարէնը միջագային լեզու էր: Որպէսզի աշակերտները կարենային փրկութեան Աւետարանը տարածել՝ բնականօրէն Յունարէնով գրի պիտի առնէին Նոր Կտակարանը:

13.- Ի՞նչ լեզուով գրի առնուեցաւ Հին Կտակարանը:

- Եբրայերէնով:

14.- Ո՞վ է հեղինակը Աստուածաշունչի առաջին հինգ գիրքերուն:

- Մովսէս (Բ.Օր 31.9, 24-26):

15.- Աստուածաշունչի գիրքերէն ո՞ր մէկը քննարկուած է «Մեսիական Գիրք» անունով:

- Եսայի մարգարէին գիրքը:

16.- Աստուածաշունչի ո՞ր գիրքերուն մէջ «Աստուած» եւ «Տէր» բառերը բնա՛ւ չեն գործածուած:

- Եսթերի եւ Երգ Երգոց գիրքերուն մէջ:

17.- Հին Կտակարանի գիրքերուն հեղինակներէն որո՞նք հրեայ չէին:

- Յոր եւ Հոուֆ:

18.- Քանի՞ գիրք ունի Հին Կտակարանը:

- Ըստ Եբրայական Կանոնի՝ 39, իսկ ըստ Եօթանասնիցի՝ 48:

19.- Քանի՞ գիրք ունի Նոր Կտակարանը:

- 27:

20.- Ի՞նչ կը կոչուին Յակոբոս, Պետրոս, Յովհաննէս եւ Յուդա առաքեալներուն կողմէ գրուած եօթը նամակները:

- «Ընդհանրական նամակներ»:

21.- Աստուածաշունչի ո՞ր գիրքերուն համար կը գործածենք «Հնգամատեան» անուանումը:

- Աստուածաշունչի առաջին հինգ գիրքերուն (Մենդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց եւ Երկրորդումն Օրէնքի) համար:

22.- Աստուածաշունչի գիրքերէն որո՞նք «պատմական գիրքեր» են:

- Հնգամատեանին յաջորդող 12 գիրքերը՝ Յեսուէն մինչեւ Եսթեր:

23.- Աստուածաշունչի գիրքերէն որո՞նք «բանաստեղծական գիրքեր» են:

- Յոբայ, Սողմոսաց, Առակաց, Ժողովողի եւ Երգ Երգոց գիրքերը:

24.- Աստուածաշունչի գիրքերէն որո՞նք «մարգարէական գիրքեր» են:

- Հին Կտակարանի վերջին 17 գիրքերը, Եսայի գիրքէն մինչեւ Մաղափիայի գիրքը:

25.- Հին Կտակարանի գիրքերէն որո՞նք կոչուած են «մեծ մարգարէներ»:

- Եսայի, Երեմիա, Եզեկիէլ եւ Դանիէլ:

26.- Հին Կտակարանի գիրքերէն որո՞նք կոչուած են «փոքր մարգարէներ»:

- Հին Կտակարանի վերջին 12 գիրքերը, Ովսեայէն մինչեւ Մաղափիա:

27.- Հրեաներ Հին Կտակարանը քանի՞ մասի կը բաժնեն:

- Երեք: 1) Օրէնք, 2) Մարգարէներ, 3) Գիրքեր:

28.- Ի՞նչ կը հասկնանք «Օրէնք» կամ «Օրէնքի գիրք» ըսելով:

- Կը հասկնանք առաջին հինգ գիրքերը: (Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց եւ Երկրորդումն Օրէնքի):

29.- Ո՞ր թուականին առաջին անգամ մեր հայրերը թարգմանեցին Աստուածաշունչը:

- 404-405 թուականներուն, Հայոց Այբուբենի գիւտէն անմիջապէս ետք:

30.- Աստուածաշունչի այս առաջին թարգմանութիւնը ի՞նչ անունով բնորոշուած է մեր պատմագրութեան մէջ:

- «Փութանակի թարգմանութիւն» (Կորիւն Վարդապետ եւ Մովսէս Խորենացի):

31.- Ո՞ր թուականին մեր հայրերը վերատեսութեան ենթարկեցին Աստուածաշունչը:

- 432-435 թուականներուն:

32.- Ի՞նչ կոչուած է վերատեսութեան ենթարկուած Աստուածաշունչը:

- «Թարգմանութեանց Թագուհին»:

33.- Ո՞վ մեր գրաբար Աստուածաշունչը կոչած է «Թագուհի Թարգմանութեանց»:

- Հովանտացի հեղինակ՝ Լա Քրոզ:

34.- Աստուածաշունչի ո՞ր բաժինը կը ներկայացնէ նահապետներու պատմութիւնը:

- Ծննդոց 12-50 գլուխները:

35.- Աստուածաշունչի ո՞ր գիրքերը կը ներկայացնեն Եգիպտոսէն ելքի եւ անապատային թափառումներու պատմութիւնը:

- Ելից եւ Թուոց գիրքերը:

36.- Աստուածաշունչի ո՞ր գիրքերը կը ներկայացնեն դատաւորներու պատմութիւնը:

- Յեսուի եւ Դատաւորներու գիրքերը, ինչպէս նաեւ Առաջին Թագաւորաց գիրքին 1-8 գլուխները:

37.- Աստուածաշունչի ո՞ր գիրքերը կը ներկայացնեն թագաւորներու պատմութիւնը:

- Թագաւորաց չորս գիրքերը, ինչպէս նաեւ Առաջին եւ Երկրորդ Մնացորդաց գիրքերը:

38.- Աստուածաշունչի ո՞ր գիրքերը կը խօսին Բաբելոնի գերութեան եւ գերութենէ դէպի հայրենիք (Երուսաղէմ) վերադարձին մասին:

- Դանիէլի, Եսթերի, Եզրասի եւ Նեհեմիայի գիրքերը:

39.- Ո՞ւր կը նանֆ կարդալ նախաբրիստոնէական չորս դարերու պատմութեան մասին:

- Մակաբայեցիներու գիրքերուն մէջ, ինչպէս նաեւ այլ Երկրորդականոն կոչուած գիրքերու մէջ:

40.- Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն առաջին ժողովածոն:

- Մովսէս մարգարէն ինք կատարեց Հին Կտակարանի գիրքերուն առաջին ժողովածոն, որովհետեւ ի՛նքն էր որ 1446-էն 1406-ի միջեւ գրի առաւ Հնգամատեանը:

41.- Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն երկրորդ ժողովածոն:

- Աստուածաշունչ գիրքերուն երկրորդ ժողովածոն կազմուեցաւ Յուդայի Եզեկիա թագաւորին օրով (716-687), (Բ.Մն 31.21: Հմմտ Ա.ռ 25.1):

42.- Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն երրորդ ժողովածոն:

- Երրորդ ժողովածոն կազմուեցաւ Նոսիա (Յովսիա) թագաւորին օրով 640-ական թուականներուն:

43.- Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն չորրորդ ժողովածոն:

- Չորրորդ ժողովածոն կազմուեցաւ քահանայական դասին կողմէ, Բաբելոնի գերութեան օրերուն, Ք.Ա. 580էն 545-ի միջեւ, գլխաւորութեամբ Եզեկիէլ մարգարէին:

44.- Որո՞նց օրով եւ որո՞նք կատարեցին Հին Կտակարանի գիրքերուն հինգերորդ ժողովածոն:

- Հինգերորդ ժողովածոն կատարուեցաւ Եզրա քահանային եւ Նեհեմիա մարգարէին օրով, Ք.Ա. շուրջ 444-ին:

2.- Յիսուսի ծննդեան վերաբերեալ

1.- Ո՞վ էր Հոռմի կայսրը Յիսուսի ծննդեան տոնն:

- Օգոստոս (Ղկ 2.1):

2.- Ո՞վ կ'իշխեր ամբողջ Պաղեստինի վրայ Յիսուսի ծննդեան ժամանակ:

- Մեծն Հերոդիէս (Մտ 2.1):

3.- Ո՞վ աւետիս տուաւ Մարիամին թէ Որդի մը պիտի ունենայ:

- Գաբրիէլ (Ղկ 1.26):

4.- Եղիսաբէթի յղութեան քանի՞ երրորդ ամսուան Մարիամին աւետիս տրուեցաւ թէ Որդի մը պիտի ունենայ:

- Վեցերորդ ամսուան (Ղկ 1.26):

5.- Ո՞ւր կը գտնուէր Մարիամ երբ Գաբրիէլ հրեշտակը հաղորդեց իրեն աւետիսը:

- Գալիլեայի Նազարէթ քաղաքին մէջ (Ղկ 1.26-27):

6.- Ո՞ւր գնաց Մարիամ աւետիսը առնելէ ետք:

- Եղիսաբէթի քով, *«Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը»* (Ղկ 1.39-41):

7.- Հրեշտակներ առաջին անգամ որո՞նց տուին Յիսուսի ծննդեան աւետիսը:

- Հովիւներու (Ղկ 2.8-11):

8.- Յիսուս ծնելէ քանի՞ օր ետք թլփատուեցաւ:

- Ութը օր ետք (Ղկ 2.21):

9.- Ի՞նչ էր այն անձին անունը որ գրկեց Յիսուսը երբ բերուած էր տաճարին ընծայուելու համար:

- Սիմոն (Ղկ 2.27-28):

10.- Ի՞նչ էր անունը այն մարգարեուհիին որ հանդիպեցաւ Յիսուսի անոր տանար ընծայումի ժամանակ եւ քանչեւ անոր փրկչական հանգամանքը:

- Աննա (Ղկ 2.36-38):

11.- Ո՞ր անցուց Յիսուս իր մանկութիւնը:

- Գալիլեայի Նազարէթ քաղաքին մէջ (Ղկ 2.39):

12.- Ո՞վ Յիսուսը՝ «Յիսուս» կոչեց:

- Գաբրիէլ հրեշտակը (Մտ 1.20-21: Ղկ 1.26-27, 21):

13.- Ո՞ր ծնաւ Յիսուս:

- «Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ» (Մտ 2.5):

14.- Որո՞նք եկան արեւելէն երկրպագելու նորածին Յիսուսը:

- Երեք մոգեր (Մտ 2.2):

15.- Ի՞նչ էր այն նշանը որ մոգերը արեւելէն Բեթլեհէմ առաջնորդեց:

- Աստղ (Մտ 2.2, 9-10):

16.- Ի՞նչ ընծայեցին երեք մոգերը Յիսուսի:

- Ոսկի, կնդրուկ եւ զմուռ (Մտ 2.11):

17.- Երբ Մեծն Հերովդէս ուզեց սպաննել Յիսուսը, Յովսէփ Մարիամն ու Յիսուս մանուկը առնելով ո՞ր փախաւ:

- Եգիպտոս (Մտ 2.13):

18.– Ո՞վ սպաննել տուաւ «Բեթլեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները» երբ տեսաւ որ մոգերը գինձ խաբեցին:
– Մեծն Հերովդէս(Մտ 2.16):

19.– Ո՞վ յաջորդեց Մեծն Հերովդէսին:
– Իր որդին՝ Արքեղայոս (Մտ 2.22):

20.– Յովսէփ Եգիպտոսէն գալով ո՞ւր բնակեցաւ:
– Գալիլեայի Նազարէթ ֆաղափին մէջ (Մտ 2.23):

3.– Յիսուսի հրաշքներուն վերաբերեալ

1.– Ի՞նչ էր Յիսուսի գործած առաջին հրաշքը:
– Կանայի հարսանիքի ընթացքին ջուրը գինիի փոխելը (Յհ 2.7-11):

2.– Որո՞նց յարութիւն տուաւ Յիսուս:
– Ղազարոսի (Յհ 11.41-44),
– Նային ֆաղափին մէջ՝ այրի կնոջ մը որդիին (Ղկ 7.11-15),
– Եւ Յայրոսի աղջկան (Մր 5.35-43):

3.– Բեթհեզդայի անդամալոյծը ֆանի՞ տարիէ ի վեր հիւանդ էր երբ Յիսուս գայն բուժեց:
– 38 տարիէ ի վեր (Յհ 5.5):

4.– Ի՞նչ էր այն կոյրին անունը որ աղաղակեց.
«Դաւիթի՛ Որդի, Յիսու՛ս, ողորմէ՛ ինձի»:
– Բարտիմէոս (Մր 10.46-47):

5.- Ի՞նչ էր այն ֆաղափին անունը ուր Յիսուս ներկայ
եղաւ հարսանիքի մը իր մօրը հետ միասին:

- Կանա (Յհ 2.1):

6.- Ո՞ր առաքեալին զոգանչը բժշկեց Յիսուս:

- Պետրոս առաքեալին զոգանչը (Մտ 8.14-15):

7.- Քանի՞ տարիէ ի վեր արիւնահոսութենէ կը
տառապէր այն կինը որուն բուժեց Յիսուս:

- 12 տարիէ ի վեր (Մտ 9.20):

8.- Հինգ հազարին կերակրումը քանի՞ հացով եւ
քանի՞ ձուկով տեղի ունեցաւ:

- Հինգ հացով եւ երկու ձուկով (Մտ 14.19-21):

9.- Չորս հազարին կերակրումը քանի՞ հացով եւ
քանի՞ ձուկով տեղի ունեցաւ:

- Եօթը հացով եւ քանի մը մանր ձուկերով (Մտ
15.34-38):

10.- Քանի՞ տարիէ ի վեր չար ոգիէ բռնուած եւ մէջքը
ծռած կը փալէր այն կինը որուն բժշկեց Յիսուս:

- 18 տարիէ ի վեր (Ղկ 13.11):

11.- Բժշկուող տասը բորոտներէն քանի՞ հոգի
վերադարձաւ եւ շնորհակալութիւն յայտնեց Յիսուսի:

- Մէկ հոգի (Ղկ 17.12-16):

12.- Քանի՞ օրէ ի վեր թաղուած էր Ղազարոս երբ
Յիսուս յարութիւն տուաւ անոր:

- 4 օրէ ի վեր (Յհ 11.39):

13.- Ի՞նչ էր անունը այն կնոջ *«որմէ եօթը չար
նգիներ հանած էր»* Յիսուս:

- Մարիամ Մագդաղենացի (Ղկ 8.2):

14.- Քանի՞ անգամ Յիսուս հրաշքով մեծ ֆանակու-
թեամբ ձուկ բռնել տուաւ աշակերտներուն:

- Երկու անգամ (Ղկ 5.1-7: Յհ 21.1-11):

15.- Որո՞ւ կը պատկանի հետեւեալ հաստատումը.-
*«Գիտե՞նք որ Աստուած մեղաւորներուն մտիկ չ'ըներ, բայց
կը լսէ անոնց՝ որոնք աստուածապաշտ են եւ իր կամքը կը
կատարեն»:*

- Ի ծնէ կոյր մարդուն (Յհ 9.31):

16.- Աշակերտները որո՞ւ չկրցան բուժել:

- Չար ոգի ունեցող տղու մը (Մտ 17.14-16):

17.- Ուրկէ՞ բերաւ Յիսուս տանարին տուրքը երբ
իբրմէ պահանջուեցաւ տուրքը վճարել:

- Ձուկի մը բերնին մէջէն (Մտ 17.24-27):

18.- Ի՞նչ էր այն ծառային անունը որուն ականջը
կտրեց Պետրոս եւ զոր բուժեց Յիսուս:

- Մաղֆոս (Յհ 18.10: Ղկ 22.50-51):

19.- Ո՞ր ֆաղափէն էր այն անդամալոյծը զորս չորս
հոգիներու կողմէ շակուած Յիսուսի բերուեցաւ:

- Կափառնաումէն (Մր 2.1-3):

20.- Յիսուս ֆանի՞ դիւահարներ բժշկեց:

- Շատ (Մտ 8.16), որոնցմէ 5-ը յատուկ կերպով յիշուած են.-

Կափառնառումի դիւահարին բժշկութիւնը (Մր 1.23-26)

Կոյր եւ համր դիւահարին բժշկութիւնը (Մտ 12.22)

Գերգեսացի երկու դիւահարներու բժշկութիւնը (Մտ 8.28-32)

Համր դիւահարին բժշկութիւնը (Մտ 9.32-33)

Լուսնոտ սղուն բժշկութիւնը (Մտ 17.14-18):

21.- Յիսուս քանի՞ կոյրեր բժշկեց:

- Շատ (Մտ 15.30, 21.14), որոնցմէ 5-ը յատուկ կերպով յիշուած են.-

Երկու կոյրերու բժշկութիւնը (Մտ 9.27-30)

Բեթսայի դայի կոյրին բժշկութիւնը (Մր 8.22-25)

Ի ծնէ կոյրին բժշկութիւնը (Յհ 9.1-7)

Երիւբակի երկու կոյրերուն բժշկութիւնը (Մր 10.46-52)

Կոյր եւ համր մարդու մը բժշկութիւնը (Մտ 12.22):

22.- Յիսուս քանի՞ անդամալոյծներ բժշկեց:

- Շատ (Մտ 4.24, 8.6), որոնցմէ 3-ը յատուկ կերպով յիշուած են.-

Կափառնառումի անդամալոյծին բժշկութիւնը (Մր 2.1-12)

Բեթհեզդայի անդամալոյծին բժշկութիւնը (Յհ 5.1-9)

Հարիւրապետին անդամալոյծ ծառային բժշկութիւնը (Մտ 8.5-13):

4.- Տասներկու առաքեալներուն մասին

1.- Որո՞նք են 12 առաքեալները:

- Պետրոս եւ Անդրէաս, Յակոբոս եւ Յովհաննէս,
Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Մատթէոս եւ Թովմաս,
Ալփէոսի որդին՝ Յակոբոս եւ Սիմոն Նախանձայոյց,
Յակոբի որդին՝ Յուդա (որ Թաղէոս առաքեալն է),
եւ Յուդա Իսկարիոտացի (Ղկ 6.14-16):

2.- Բարթողոմէոս ուրիշ ի՞նչ անունով ծանօթ է:
- Նաթանայէլ (Յհ 1.45):

3.- Թաղէոս ուրիշ ի՞նչ անուններով ծանօթ է:
- Ղեբէոս (Մտ 10.3) եւ Յուդա (տե՛ս Ղկ 6.16):

4.- Մատթէոս ուրիշ ի՞նչ անունով ծանօթ է:
- Ղեւի (Ղկ 5.27):

5.- Պետրոս ուրիշ ի՞նչ անուններով ծանօթ է:
- Սիմոն (Յհ 1.41, 21.15), եւ Կեփաս (Յհ 1.42: Գղ
2.9):

6.- Սիմոն Նախանձայոյց ուրիշ ի՞նչ անունով ծանօթ
է:
- Շմաւոն (Գրծ 1.13):

7.- Ո՞ր աշակերտը չուզեց որ Տէրը իր ոտները լուայ:
- Պետրոս (Յհ 13.6-8):

8.- Առաքեալներէն ո՞վ «Երկուորեակ» կը կոչուէր:
- Թովմաս (Յհ 21.2):

9.- Առաքեալներէն ո՞վ մաքս գանձող էր:
- Մատթէոս (Մտ 9.9):

10.- Ո՞ր առաքելները ձկնորս էին:
- Պետրոս եւ Անդրէաս, Յակոբոս եւ Յովհաննէս (Մտ 4.18-22):

11.- Յիսուս ո՞ր առաքելները «Բռաներգես»,
այսինքն՝ «Որոտացող Մարդիկ» կոչեց:
- Յովհաննէս եւ Յակոբոս եղբայրները (Մր 3.17):

12.- Ո՞ր առաքելին Յիսուս ըսաւ.- *«Բեզի պիտի
տամ երկինքի արքայութեան բանալիները»:*
- Պետրոսի (Մտ 16.19):

13.- Ո՞ր առաքելը Տիրոջ ըսաւ.- *«Տէ՛ր, չենք գիտեր
ուր կ'երթաս. արդ, ի՞նչպէս կրնանք համբան գիտնալ»:*
- Թովմաս (Յհ 14.5):

14.- Ո՞ր առաքելը յանդիմանուեցաւ Պօղոս
առաքելի կողմէ իր կեղծաւոր ընթացքին համար:
- Պետրոս (Գղ 2.11-14):

15.- Առաքելներէն ո՞վ ըսաւ Յիսուսի.- *«Ցոյց տուր
մեզի Հայրը եւ կը բաւէ մեզի»:*
- Փիլիպպոս (Յհ 14.8):

16.- Ո՞ր առաքելը ըսաւ Յիսուսի.- *«Հեռացի՛ր
ինձմէ, Տէ՛ր, որովհետեւ ես մեղաւոր մարդ մըն եմ»:*
- Պետրոս (Ղկ 5.8):

17.- Առաքելներէն ո՞վ ըսաւ Յիսուսի.- *«Տէ՛րս եւ
Աստուա՛ծս»:*
- Թովմաս (Յհ 21.28):

18.- Առաքելներէն ո՞վ հարցուց Յիսուսի.- *«Տէ՛ր, քանի անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ իրեն. մինչեւ եօթը անգամ»:*

- Պետրոս (Մտ 18.21):

19.- Առաքելներէն որո՞նք Յիսուսի ըսին. *«Երբ թագաւորութեանդ փառքի գահին նստիս, շնորհէ՛ որ մենք ինչ աչ եւ ձախ կողմդ նստինք»:*

- Զեբեդէոսի որդիները՝ Յովհաննէս եւ Յակոբոս (Մր 10.35-37):

20.- Առաքելներէն որո՞նք եղբայրներ էին:

- Պետրոս եւ Անդրէաս (Մտ 4.18):

- Յովհաննէս եւ Յակոբոս (Մտ 4.21):

21.- Յիսուս որո՞ւ համար ըսաւ.- *«Ահաւասիկ նշմարիտ Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ»:*

- Նաթանայէի (Բարթողոմէոսի) համար (Յհ 1.47):

22.- Առաքելներէն ո՞վ կոչուած է «գող»:

- Յուդա Իսկարիոտացին (Յհ 12.6):

23.- Ո՞ր առաքելը ըսաւ.- *«Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ... չեմ հաւատար»:*

- Թովմաս (Յհ 20.25):

24.- Ո՞ր առաքելին Յիսուս ըսաւ.- *«Ետի՛ս գնա, Սատանայ՛»:*

- Պետրոսի (Մտ 16.23):

25.- Ո՞ր քաղաքէն էր Նաթանայէլ (Բարթողոմէոս) առաքելը:

- Գալիլեայի Կանա ֆաղաֆեն (Յհ 21.2):

26.- Ո՞ր առաքեալը Պետրոսը առաջնորդեց Յիսուսի:
- Անդրէաս (Յհ 1.40-42):

27.- Ո՞վ Նաթանայէլը առաջնորդեց Յիսուսի:
- Փիլիպպոս (Յհ 1.45-46):

28.- Ո՞ր ֆաղաֆեն էին Անդրէաս, Պետրոս եւ Փիլիպպոս առաքեալները:
- Բեթսայիդայէն (Յհ 1.44):

29.- Ըստ աւանդութեան, առաքեալներէն ո՞վ Ներոն կայսրին հրամանով գլխիվայր խաչուեցաւ:
- Պետրոս:

30.- Առաքեալներէն որո՞նք *«եկեղեցւոյ սիւները կը համարուէին»*:
- Յակոբոս, Կեփաս (Պետրոս) եւ Յովհաննէս (Գղ 2.9):

31.- Ո՞վ փոխարինեց Յուդա Իսկարիոտացին:
- Մատաթիա (Գրծ 1.26):

32.- Որո՞նք տեսան Տիրոջ այլակերպումը:
- Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս (Ղկ 9.28-29):

33.- Յովհաննէս առաքեալ ո՞ր կղզին, ո՞ր թուին եւ ո՞ր կայսրին օրով ափսորուեցաւ:
- Ափսորուեցաւ Պատմոս կղզին, 90-95 թ., Դոմետիանոս կայսրին օրով:

34.– Յովհաննէս առաքեալ ռ՞ր կայսրին օրով եւ ռ՞ր թուին աքտրէն ազատեցաւ:

– Ազատեցաւ Ներվա կայսրին օրով, 96–98 թ.:

35.– Տասներկու առաքեալներէն ռ՞վ ինքզինք կախեց:

– Յուդա Իսկարիոտացի (Մտ 27.5):

36.– Առաքեալներէն ռ՞վ ամուսնացած էր:

– Պետրոս (Մտ 8.14–15):

37.– Առաքեալներէն որո՞նք Յիսուսի ըսին. «*Պու՛ն Աստուծոյ Որդի՛ն ես*»:

– Նաթանայէլ (Յհ 1.49) եւ Պետրոս (Մտ 16.16):

5.– Աւետարանիչներուն վերաբերեալ

1.– Ո՞ր աւետարանիչին մօրը անունը Մարիամ էր:

– Մարկոսի (Գրծ 12.12):

2.– Ո՞ր աւետարանիչը Յունագէտ եւ բժիշկ էր:

– Դուկաս (Կղ 4.14):

3.– Ո՞ր աւետարանիչը ներկայ էր Յիսուսի այլակերպութեան:

– Յովհաննէս (Մտ 17.1–2):

4.– Ո՞ր աւետարանիչը Բառնաբասի եղբորորդին էր:

– Մարկոս (Կղ 4.10):

5.– Աւետարանիչներէն ռ՞վ հրեայ չէր, այլ՝ յոյն:

– Դուկաս:

6.- Աւետարանիչներէն ո՞վ ներկայ էր Յիսուսի հետ Գեթսեմանիի մէջ:

- Յովհաննէս (Մր 14.33):

7.- Աւետարանիչներէն ո՞վ մաքսաւոր էր:

- Մատթէոս (Մտ 9.9):

8.- Աւետարանիչներէն ո՞վ ձկնորս էր:

- Յովհաննէս (Մտ 4.21):

9.- Ո՞ր աւետարանիչը գրած է Գործք Առաքելոցը:

- Ղուկաս (Գրծ 1.1 հմմտ Ղկ 1.1):

10.- Ո՞ր Աւետարանիչին անունը նախապէս Յովհաննէս էր:

- Մարկոսի (Գրծ 12.12, 25):

11.- Աւետարանիչներէն ո՞վ Յիսուսի ըսաւ.- *«Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ չար ոգիներ կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն»:*

- Յովհաննէս (Ղկ 9.49):

12.- Ո՞ր աւետարանիչին տունը հաւատացեալներ աղօթք կ'ընէին:

- Մարկոսի (Գրծ 12.12):

13.- Ո՞ր աւետարանիչը Պատմոս կղզին աքտորուեցաւ:

- Յովհաննէս (Յյտ 1.9):

14.- Ո՞վ քանչեւ յարգմանը Պետրոսի:

- Մարկոս:

15.- Աւետարանիչներէն ո՞վ բնաւ առակ չէ պատմած իր Աւետարանին մէջ:

- Յովհաննէս:

16.- Աւետարանիչներէն ո՞վ իր Աւետարանը ուղղած է Թէոփիլոս անունով անձի մը:

- Ղուկաս (Ղկ 1.1):

17.- Աւետարանիչներէն ո՞վ քանչեւ իր իբրեւ «եկեղեցւոյ սիւն»:

- Յովհաննէս (Գղ 2.9):

18.- Աւետարանիչներէն որո՞նք Քրիստոսի 12 աշակերտներուն խումբին մաս չէին կազմեր:

- Մարկոս եւ Ղուկաս:

19.- Աւետարանիչներէն ո՞վ ինքզինք կը կոչէր՝ «Այն աշակերտը, զոր Յիսուս կը սիրէր»:

- Յովհաննէս (Յհ 21.20, 13.23):

20.- Պետրոս առաքեալ ո՞ր Աւետարանիչը կոչած է՝ «Իմ որդիս»:

- Մարկոս (Ա.Պտ 5.13):

21.- Աւետարանիչներէն ո՞վ Յիսուսի առաջարկեց երկինքէն կրակ տեղացնել Սամարական գիւղի մը վրայ:

- Յովհաննէս (Ղկ 9.52-54):

22.- Աւետարանիչներէն ո՞վ ուղեկից եղած է Պօղոսի եւ Բառնաբասի անոնց առաքելական առաջին քամարորդութեան սկիզբին միայն:

- Մարկոս (Գրծ 13.5):

23.- Աւետարանիչներէն ո՞վ Յուդա Իսկարիոտացին կը կոչէ «գող»:

- Յովհաննէս (Յհ 12.6):

6.- Աւետարաններուն վերաբերեալ

1.- Ի՞նչ կը կոչուին Մատթէոս, Մարկոս եւ Դուկաս Աւետարանները:

- «Համատեսական Աւետարաններ»:

2.- Ո՞ր Աւետարանը շեշտը կը դնէ Քրիստոսի աստուածութեան վրայ:

- Յովհաննէս:

3.- Ի՞նչ լեզուով Աւետարանիչներ գրի առին Աւետարանները:

- Յունարէնով:

4.- Ո՞ր Աւետարանները կը ներկայացնեն Յիսուսի ունեցած գործունէութիւնը Գալիլեայի մէջ:

- Մատթէոս, Մարկոս եւ Դուկաս:

5.- Ո՞ր Աւետարանը կը ներկայացնէ Յիսուսի ունեցած գործունէութիւնը Երուսաղէմի եւ Հրէաստանի մէջ:

- Յովհաննէս:

6.- Ո՞ր Աւետարանիչը իր Աւետարանը ուղղած է Հրէութենէ դարձի եկող քրիստոնեաներուն:

- Մատթէոս:

7.- Ո՞ր Աւետարանիչը իր Աւետարանը ուղղած է Հոռմի ֆրիստոնեաներուն եւ անոր շուրջ գտնուող եկեղեցիներուն:

- Մարկոս:

8.- Ո՞ր Աւետարանիչը իր Աւետարանը ուղղած է Թէոփիլոս անունով Յոյն անձի մը, ինչպէս նաեւ Հրէական ծագում չունեցող նորահաւատ ֆրիստոնեաներու:

- Ղուկաս:

9.- Ո՞ր Աւետարանիչը իր Աւետարանը չէ ուղղած մասնաւոր ազգի մը կամ եկեղեցիի մը, այլ ուղղած է բոլորին:

- Յովհաննէս:

10.- Ո՞ր Աւետարանը Յիսուսը կը ներկայացնէ մարդու կերպարանով (Յյտ 4.7):

- Մատթէոսի Աւետարանը:

11.- Ո՞ր Աւետարանը Յիսուսը կը ներկայացնէ առիւծի կերպարանով (Յյտ 4.7):

- Մարկոսի Աւետարանը:

12.- Ո՞ր Աւետարանը Յիսուսը կը ներկայացնէ եգի կերպարանով (Յյտ 4.7):

- Ղուկասու Աւետարանը:

13.- Ո՞ր Աւետարանը Յիսուսը կը ներկայացնէ արծիւի կերպարանով (Յյտ 4.7):

- Յովհաննէսի Աւետարանը:

14.- Ո՞ւր եւ ո՞ր թուականին գրուած է Մատթէոսի Աւետարանը:

- Գրուած է Երուսաղէմի մէջ, 63-էն 65-ի միջեւ:

15.- Ո՞ւր եւ ո՞ր թուականին գրուած է Մարկոսի Աւետարանը:

- Գրուած Հռոմի մէջ, է 65-էն 67-ի միջեւ:

16.- Ո՞ւր եւ ո՞ր թուականին գրուած է Ղուկասի Աւետարանը:

- Գրուած է Հռոմի մէջ, 60-62 թուականներուն:

17.- Ո՞ւր եւ ո՞ր թուականին գրուած է Յովհաննէսի Աւետարանը:

- Գրուած է Եփեսոսի մէջ, 85-էն 90-ի միջեւ:

18.- Ո՞ր Աւետարանիչը իր գրութեան նպատակը յայտնած է «իր» Աւետարանին մէջ:

- Յովհաննէս: Ան կ'ըսէ. *«Այսքանը գրուեցաւ, որպէսզի հաւատա՛ք թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստուծոյ Որդին, եւ իրեն հանդէպ ձեր ունեցած հաւատքին միջոցաւ յաւիտեանական կեանք ունենա՛ք»* (Յհ 20.31):

19.- Ո՞ր Աւետարանը ամենէն շատ մէջբերում կ'ընէ Հին Կտակարանէն, կը յիշէ Մեսայիին վերաբերեալ մարգարէական խոստումներ եւ ցոյց կու տայ անոնց կատարումը:

- Մատթէոս:

20.- Ո՞ր Աւետարանիչը «իր» Աւետարանին մէջ լայն տեղ կու տայ կին դասակարգին:

- Ղուկաս: Քանի մը օրինակներ.-

Կը խօսի Եղիսաբէթի մասին (Ղկ 1.5-6):

Մարիամի եւ Եղիսաբէթի հանդիպումին մասին (Ղկ 1.39-45):

Մարիամի օրհներգութեան մասին (Ղկ 1.46-56):

Աննա մարգարէուհիին մասին (Ղկ 2.36-38):

Սարեփայի մէջ բնակող այրի կնոջ մը մասին (Ղկ 4.26):

Իր գաւակը կորսնցուցած այրի կնոջ մը մասին (Ղկ 7.12):

Յիսուսի հոգ տանող խումբ մը կիներու մասին (Ղկ 8.1-3):

Մարիամի եւ Մարթայի մասին (Ղկ 10.38-42):

Անիրաւուած այրի կնոջ մը մասին (Ղկ 18.3-5):

Աղփատ ու այրի կնոջ մը մասին (Ղկ 21.1-4):

Լացող ու ողբացող կիներու մասին (Ղկ 23.27-28):

Եւայլն:

7.- Յիսուսի երկրաւոր կեանքի վերջին օրերուն վերաբերեալ

1.- Ո՞վ էր կայսրը Յիսուսի դատավարութեան ատեն:
- Տիրերիոս:

2.- Ո՞վ կատարեց Յիսուսի դատավարութիւնը:
- Պիղատոս (Յհ 19.16):

3.- Ի՞նչ ըրաւ Յիսուս իր վերջին ընթրիքէն ետք:
- Աշակերտներուն ոտները լուաց (Յհ 13.1-5):

4.- Ե՞րբ հաստատեց Յիսուս Սուրբ Հաղորդութեան խորհուրդը:

- Վերջին ընթրիքի պահուն (Մտ 26.26-28):

5.- Ո՞ր աշակերտն էր որ չուզեց որ Յիսուս իր նոտքերը լուայ:

- Պետրոս (Յհ 13.6-8):

6.- Ո՞վ մատնեց Յիսուսը:

- Յուդա Իսկարիոտացին (Յհ 18.1-3):

7.- Ո՞ւր կը գտնուէր Յիսուս երբ ձերբակալուեցաւ:

- Գեթսեմանիի պարտեզին մէջ (Մր 14.32-46):

8.- Ե՞րբ ձերբակալուեցաւ Յիսուս:

- Զորեֆշաբթի օր:

9.- Ո՞վ սուրով կտրեց Քահանայապետին ծառային ականջը:

- Պետրոս (Յհ 18.10-11):

10.- Կրնա՞ս կարգաւ յիշել թէ Յիսուս իր ձերբակալութենէն ետք որո՞նց մօտ տարուեցաւ:

- Նախ տարուեցաւ նախկին քահանայապետ՝ Հաննայի բով (Յհ 18.12-13): Անկէ ետք՝ Կայիափա քահանայապետին բով (Յհ 18.24): Յետոյ՝ Պիղատոսի բով (Յհ 18.28-29): Ապա՝ Հերովդէս Անտիպասի բով (Ղկ 23.6-8): Եւ յետոյ, դարձեալ Պիղատոսի բով (Ղկ 23.11):

11.- Որո՞նք իրարու հետ հաշտուեցան Յիսուսի ձերբակալութեան առիթով:

- Պիղատոս եւ Հերովդէս Անտիպաս (Ղկ 23.12):

12.- Ի՞նչ էր այն աւագակին անունը որ ազատ արձակուեցաւ Զատիկի օրը՝ Յիսուսի փոխարէն:
- Յեսու Բարաբբա (Մտ 27.16, 26):

13.- Ո՞վ էր քահանայապետը Յիսուսի դատավարութեան ժամանակ:
- Կայիափա (Յհ 18.13):

14.- Ո՞ր առաքեալը երեք անգամ ուրացաւ Յիսուսը:
- Պետրոս (Ղկ 22.34):

15.- Ի՞նչ կը կոչուէր այն տեղը ուր Յիսուս խաչը շալկած բարձրացաւ:
- «Գողգոթա», այսինքն՝ «Գանկի վայր» (Մտ 27.33: Յհ 19.17):

16.- Ո՞վ շալկեց խաչը երբ Յիսուս խաչի բեռան տակ ինկաւ:
- Սիմոն Կիրենացի (Ղկ 23.26):

17.- Ե՞րբ խաչուեցաւ Յիսուս:
- Ուրբաթ, կէսօրուայ ատեն, ժամը 11-էն 12-ի միջեւ:

18.- Ի՞նչ տեղի ունեցաւ Յիսուսի խաչելութեան պահուն, կէսօրուայ 12-էն 3-ի միջեւ:
- «Արեւը խաւարեցաւ եւ ամբողջ երկիրը խաւարի մէջ մնաց» (Ղկ 23.44):

19.- Քանի՞ իսոսք արտասանեց Յիսուս խաչին վրայ:

- Եօթը:

ա.- «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ լիքցիր զիս»
(Մտ 27.46):

բ.- «Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ
ի՛նչ կ'ընեն» (Ղկ 23.34):

գ.- «Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս
դրախտին մէջ» (Ղկ 23.43):

դ.- «Մա՛յր, ահաւասիկ զաւակդ...: Ահաւասիկ
մայրդ» (Յհ 19.26-27):

ե.- «Ծարաւ եմ» (Յհ 19.28):

զ.- «Ամէն ինչ վերջացած է» (Յհ 19.30):

է.- «Հա՛յր, ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս» (Ղկ
23.46):

20.- Որո՞նք կեցած էին Յիսուսի խաչին մօտիկ:

- Յիսուսի խաչին մօտիկ կեցած էին՝ իր մայրը,
մօրաքոյրը, Կղեոպասի կինը՝ Մարիամը, Մարիամ
Մագդաղենացին, եւ Յովհաննէս առաքեալը (Յհ 19.25-26):

21.- Երբ Յիսուս խաչին վրայ էր, որո՞ւ պատասխա-
նատու նշանակեց իր մօրը:

- Իր սիրած աշակերտը՝ Յովհաննէսը (Յհ 19.26-27):

22.- Ի՞նչ տեղի ունեցաւ այն պահուն երբ Յիսուս իր
հոգին աւանդեց:

ա.- Տանարին վարագոյրը պատռուեցաւ

բ.- Երկիրը շարժեցաւ

գ.- Ժայռերը քեղեցուեցան

դ.- Գերեզմանները բացուեցան

ե.- Սուրբ ննջեցեալներ յարութիւն առին (Մտ 27.50-
52):

23.- Յիսուսի մարմինը խաչէն վար առնելէ առաջ՝
ի՞նչ ըրաւ զհնուորներէն մին:

- «Նիգակը անոր կողը իրեց» (Յհ 19.34):

24.- Երբ զհնուորներէն մէկը նիգակը Յիսուսի կողը
իրեց՝ ի՞նչ հոսեցաւ Յիսուսի կողէն:

- «Անմիջապէս արիւն ու ջուր հոսեցաւ» (Յհ 19.34):

25.- Որո՞նք առին Յիսուսի մարմինը, պատանձեցին
եւ ժայռափոր գերեզմանի մը մէջ դրին:

- Յովսէփ Արիմաթեացի եւ Նիկողեմնոս (Յհ 19.39-
40):

26.- Ե՞րբ թաղուեցաւ Յիսուս:

- Ուրբաթ օր, երեկոյեան ժամը 4-էն 6-ի միջեւ:

27.- Որո՞նք Կիրակի առաւօտ կանուխ եկան Յիսուսի
մարմինը օծելու:

- Մարիամ Մագդաղենացի, Յակոբոսի մայրը՝
Մարիամ, Սողոմէ (Մր 16.1) եւ Յովհաննա (Ղկ 24.1):

28.- Ե՞րբ յարութիւն առաւ Յիսուս:

- Կիրակի առաւօտ կանուխ:

29.- Յիսուս իր յարութենէն ետք առաջին անգամ
որո՞ւ երեւցաւ:

- Մարիամ Մագդաղենացիին (Յհ 20.11-16):

30.- Յիսուս իր յարութենէն ետք քանի՞ անգամ
երեւցաւ իր աշակերտներուն:

- 10 անգամ:

31.- Յիսուս իր յարութենէն ետք քանի՞ օր մնաց երկրի վրայ մարմնապէս:

- 40 օր (Գրծ 1.3):

32.- Իր համբարձումը ուրկէ՞ տեղի ունեցաւ:

- Բեթանիայէն (Ղկ 24.5-51): Բեթանիան Զիթենեաց լեռան վրայ գտնուող գիւղ մըն էր:

8.- Հարցումներ Գործ Առաջնոցէն

1.- Ո՞վ գրած է Գործ Առաջնոց գիրքը:

- Ղուկաս Աւետարանիչ (Ղկ 1.1 հմմտ 1.1):

2.- Ի՞նչ է այն անձին անունը որուն ուղղուած է Գործ Առաջնոց գիրքը:

- Թէոփիլոս (Գրծ 1.1):

3.- Ինչո՞ւ Յիսուս իր յարութենէն ետք երեցաւ իր աշակերտներուն:

Երկու նպատակով.-

ա.- Յոյց տալու անոնց *«թէ ինք այլեւ ողջ է»*

բ.- Եւ իստեղու անոնց *«Աստուծոյ արքայութեան մասին»* (Գրծ 1.3):

4.- Քրիստոսի համբարձումէն քանի՞ օր ետք Սուրբ Հոգիին գալուստը տեղի ունեցաւ:

- 10 օր ետք:

5.- Սուրբ Հոգիին գալստեան օրը քանի՞ հոգիներ դարձի եկան:

- Շուրջ 3000 (Գրծ 2.41):

6.- Որո՞ւ բժշկեց Պետրոս առաքեալ տանարին Գեղեցիկ կոչուած դարպասին բով:

- Ի ծնէ կաղ մարդու մը (Գրծ 3.1-10):

7.- Ո՞ր առաքեալները Ատեան տարուեցան եւ ծեծ կերան Յիսուսը քարոզելուն համար:

- Պետրոս եւ Յովհաննէս (Գրծ 5.40-41):

8.- Յիշեցէ՛ք անունները ընտրուած 7 սարկաւագներուն:

- Ստեփանոս, Փիլիպպոս, Պրոֆորոն, Նիկանոր, Տիմոն, Պարմենաս եւ Նիկողայոս (Գրծ 6.5):

9.- Ընտրուած եօթը սարկաւագներէն որո՞ւ համար կ'ըսուի թէ անոր դէմքը *«հրեշտակի դէմքի կը նմանէր»*:

- Ստեփանոսի համար (Գրծ 6.15):

10.- Գրծ 6.5-ին մէջ յիշուած 7 սարկաւագներէն ո՞վ հետագային աղանդաւոր դարձաւ :

- Նիկողայոս (Յյտ 2.6):

11.- Ո՞վ եղաւ քրիստոնեայ առաջին նահատակը:

- Սուրբ Ստեփանոս (Գրծ 7.57-60):

12.- Ո՞վ էր այն անձը որ երբ Դամասկոս կ'երթար հալածելու քրիստոնեաները *«յանկարծ երկինքէն լոյս մը փայլատակեց իր շուրջ»*, գետին ինկաւ եւ երեք օր կոյր վիճակի մէջ մնաց:

- Սօդոս (Պօղոս) (Գրծ 9.3-4, 9):

13.- Ո՞վ իր ձեռքը Սօդոսի գլխուն դրաւ եւ Սօդոս *«սկսաւ տեսնել»*:

- «Տիրոջ հետևորդ մը, որ Անանիա կը կոչուէր»
(Գրծ 9.10, 17-18):

14.- Որո՞ւ բժշկեց Պետրոս առաքեալ Լիդիայի մէջ:
- Ենէաս անունով անդամալոյծի մը (Գրծ 9.32-35):

15.- Պետրոս որո՞ւ յարութիւն տուաւ Յոպպէի մէջ:
- Տաբիթա (Այծեմնիկ) անունով կնոջ մը (Գրծ 9.36-43):

16.- Ո՞վ էր այն առաքեալը որ երբ կ'աղօթէր՝ «տեսաւ երկինքը բացուած, ուրկէ բան մը կ'իջնէր, չորս ծայրերէն կապուած սփռոցի ձեւով...»:
- Պետրոս (Գրծ 10.9-11):

17.- Ի՞նչ էր այն Հոռմայեցի հարիւրապետին անունը որուն տունը հաւաքուած հեթանոսները Սուրբ Հոգին ստացան երբ Պետրոս կը խօսէր:
- Կոռնելիոս (Գրծ 10.1-6, 44-46):

18.- Ո՞ր քաղաքին մէջ առաջին անգամ գործածուեցաւ «Քրիստոնեայ» բառը:
- Սուրիոյ մայրաքաղաք՝ Անտիոքի մէջ (Գրծ 11.26):

19.- Ո՞ր առաքեալը սուրով սպաննուեցաւ Հերովդէս Ագրիպաս Ա.ի հրամանով:
- Յովհաննէսի եղբայրը՝ Յակոբոսը (Գրծ 12.2):

20.– Ո՞վ էր այն առաքելը որ շղթաներով կապուած բանտին մէջ կը բնանար, երբ Տիրոջ հրեշտակը եկաւ եւ ազատեց զինք բանտէն:

– Պետրոս (Գրծ 12.6-10):

21.– Ո՞վ սպաննեց Հերովդէս Ագրիպաս Ա.ին:

– «Տիրոջ հրեշտակը» (Գրծ 12.23):

22.– Ի՞նչ էր այն կախարդին անունը որուն Պօղոս առաքել կուրուքեամբ զարկաւ Պա ֆոսի (Կիպրոսի) մէջ:

– Եղիմաս (Գրծ 13.6-12):

23.– Որո՞ւ բուժեց Պօղոս առաքել Լիստրայի մէջ:

– Ծնունդով կաղ մարդու մը (Գրծ 14.8-11):

24.– Ո՞ւր եւ ո՞ր թուին գումարուեցաւ առաքելական առաջին ժողովը:

– Երուսաղէմի մէջ (Գրծ 15.1-4), 49 թուին:

25.– Ո՞վ նախագահեց Երուսաղէմի մէջ տեղի ունեցող առաքելական առաջին ժողովին:

– Յակոբոս «Տեառնեղբայր» առաքելը (Գրծ 15.13):

26.– Ո՞ր քաղաքին մէջ Տիմոթէոս միացաւ Պօղոսի:

– Լիստրայի մէջ (Գրծ 16.1-3):

27.– Ի՞նչ էր «ծիրանի զգեստներ ծախող աստուածա-վախ» այն կնոջ անունը՝ որ դարձի եկաւ Փիլիպպէի մէջ, Պօղոսի քարոզութեամբ:

– Լիդիա (Գրծ 16.11-15):

28.- Ինչո՞ւ Պօղոս եւ Շիղա բանտարկուեցան Փիլիպպէի մէջ:

- Որովհետեւ Պօղոս ստրուկ աղախինէ մը դուրս շարտեց հարցուկ ոգի մը (Գրծ 16.16-23):

29.- Ի՞նչպէս Պօղոս եւ Շիղա ազատեցան բանտէն:

- Երկրաշարժ եղաւ, բանտին հիմերը շարժեցան, դռները բացուեցան եւ բոլորին կապանքները փակուեցան (Գրծ 16.25-26):

30.- Ո՞վ էր այն ֆարոգիչը որ *«գօրեղապէս կը հերժէր հրեաներու առարկութիւնները, Սուրբ Գիրքերուն մէջէն ցոյց տալով՝ թէ Յիսուսը խոստացուած Քրիստոսն է»*:

- Ապողոս, որ ծնունդով Աղեփսանդրացի էր (Գրծ 18.24-28):

31.- Մարդիկ ո՞ր առաքեալին *«քրտինճոտ թաշկիմակն ու գործի հագուստը կը տանէին հիւանդներուն եւ անոնք կը բժշկուէին իրենց ցաւերէն»*:

- Պօղոս առաքեալի (Գրծ 19.11-12):

32.- Ի՞նչ էր այն ֆահանային անունը որուն եօթը զաւակները յանդգնեցան Յիսուսի անունով չար ոգիներ դուրս հանել, բայց չար ոգիները զիրենք խոշտանգեցին:

- Սկեւա (Գրծ 19.13-14):

33.- Պօղոս եւ Ղուկաս ո՞ւր միացան իրարու:

- Յունաստանի մէջ (Գրծ 20.1-5):

34.- Ո՞վ եղաւ Երուսաղէմի եկեղեցիին առաջին ղեկավարը:

- Յակորբոս «Տեսոնեղբայր» կոչուած առաքեալը (Գրծ 21.18: Գղ 1.19):

35.- Պօղոս առաքեալ ձերբակալուելէ ետք տաճարին մէջ (Գրծ 21.27-36), ո՞ւր տարուեցաւ եւ որո՞ւ մօտ:
- Տարուեցաւ Կեսարիա, Ֆելիքսի մօտ (Գրծ 23.33):

36.- Քանի՞ տարի Ֆելիքս կուսակալը բանտարկուած պահեց Պօղոս առաքեալը Կեսարիայի մէջ:
- Երկու տարի (Գրծ 24.27):

37.- Ո՞վ էր այն թագաւորը որուն կո՛չ ուղղեց Պօղոս առաքեալ ֆրիստոնեայ ըլլալու:
- Ագրիպաս Բ. թագաւոր (Գրծ 25.27-29):

38.- Որո՞ւ ձեռքին օձ մը փաթթուեցաւ երբ կը պատ-
րաստուէր չոր ցիւղերու խուրճ մը խարոյկին մէջ նետելու:
- Պօղոս առաքեալի ձեռքին (Գրծ 28.3):

39.- Կեսարիայի մէջ շուրջ երկու տարուայ բանտա-
րկութենէ ետք, Պօղոս առաքեալ ո՞ւր տարուեցաւ:
- Հռոմ (Գրծ 28.16):

9.- Հարցումներ Պօղոս Առաքեալի նամակներուն վերաբերեալ

1.- Քանի՞ հատ են Պօղոս առաքեալին նամակները:
- 14 հատ:

2.- Ո՞ր մէկն է Պօղոսի գրած առաջին նամակը:

– Թեսաղոնիկեցիներուն Ա. նամակը: Գրուեցաւ շուրջ 50 թուականին:

3.– Ո՞ր մէկն է Պօղոսի գրած վերջին նամակը:

– Տիմոթէոսի Բ. նամակը: Գրուեցաւ 67 թուականին:

4.– Ո՞ր նամակին մէջ է որ Պօղոս առաքեալ կը խօսի Հին Կտակարանի հաւատքի ախոյեաններուն մասին:

– Եբրայեցիներուն նամակին մէջ (11-րդ գլուխ):

5.– Ո՞ր նամակը ուղղուած չէ յատուկ եկեղեցիի մը, այլ՝ քանի մը եկեղեցիներու:

– Գաղատացիներուն նամակը (1.2):

6.– Ո՞ր եկեղեցին Եւրոպական հողամասին վրայ Պօղոս առաքեալին հաստատած առաջին եկեղեցին եղաւ:

– Փիլիպպէի եկեղեցին:

7.– Ո՞ր նամակները քանչքուած են որպէս «Հովուական նամակներ»:

– Ա.Տիմոթէոս, Բ.Տիմոթէոս, եւ Տիտոս:

8.– Ո՞ր նամակները առաքեալը գրած է բանտի մէջ:

– Եփեսացիներու (3.1, 4.1, 6.20), Փիլիպպեցիներու (2.19-24), Կողոսացիներու (4.18), Բ.Տիմոթէոսի (4.16) եւ Փիլիմոնի (9) նամակները:

9.– Ո՞ր մէկն է առաքեալին ամենէն կարճ նամակը:

– Փիլիմոնի նամակը (մէկ գլուխ է):

10.- Ո՞ր կը խօսուի Սուրբ Հոգիին ինը պարգեւներուն մասին:

- (Ա.Կր 12.8-10):

11.- Ո՞ր կը խօսուի Սուրբ Հոգիին ինը պտուղներուն մասին:

- (Գղ 5.22-23):

12.- Ո՞ր եկեղեցին Պօղոսի կողմէ չէր հաստատուած, ուր սակայն առաքեալը շուրջ երեք տարի մնաց եւ ուսուցանեց իր առաքելական 3-րդ ֆամբորդութեան ընթացքին:

- Եփեսոսի եկեղեցին (Գրծ 19-20):

13.- Ո՞ր նամակը շատ կը խօսի Օրէնքին մասին:

- Գաղատացիներուն նամակը:

14.- Առաքեալ որո՞ւն համար կը գործածէ «հաւատքի հարազատ որդիս» բառերը:

- Տիմոթէոսի համար (Ա.Տմ 1.2):

15.- Ո՞ր նամակին մէջ Պօղոս կը յանդիմանէ Պետրոսը:

- (Գղ 2.11-14):

16.- Ո՞ր գրութիւնը ամբողջութեամբ սիրոյ մասին է:

- (Ա.Կր 13):

17.- Ո՞ր եկեղեցին Պօղոս առաքելի կողմէ չէր հաստատուած, այլ՝ հաստատուած էր իր աշակերտին՝ Եպաֆրասի ձեռքով:

- Կողոսայի եկեղեցին (Կղ 1.7, 4.12):

18.- Ի՞նչ էր այն ծառային անունը որ փախած էր իր տիրոջ՝ Փիլիմոնի բռնութենէն, եւ հանդիպած էր Պօղոս առաքելին բանտի մէջ եւ ֆրիստոնեայ դարձած, եւ որուն վերաբերեալ առաքելը նամակ կը գրէ Փիլիմոնին, խնդրելով անկէ որ զայն ընդունի «իբրեւ սիրելի եղբայր»:

- Ոնեսիմոս (Փլմ 10):

19.- Ո՞ւր կը հաստատուի թէ Սատանան կրնայ լուսաւոր հրեշտակի կերպարանքով երեւիլ:

- (Բ.Կր 11.14-15):

20.- Ո՞ւր կը խօսուի Զարին դէմ պայքարելու գէնգերուն մասին:

- (Եփ 6.10-20):

21.- Ո՞վ էր Պօղոս առաքելի այն գործակիցը որուն համար առաքելը կ'ըսէ. «Այս աշխարհը նախընտրելով՝ զիս լիեց եւ թեսաղոնիկէ գնաց»:

- Դեմաս (Բ.Տմ 4.10):

10.- Ստեղծագործութենէն մինչեւ Իսահակ

1.- Գիտե՞՞ք Ադամի եւ Եւայի որդիներուն անունները:

- Կայէն, Աբել եւ Սէթ (Ծն 4.1-2, 25):

2.- Ո՞վ եղած է աշխարհի մէջ առաջին հովիւը:

- Աղամի որդին՝ Աբել (Ծն 4.2):

3.- Ո՞վ եղած է աշխարհի մէջ առաջին երկրագործը:

- Աղամի որդին՝ Կայէն (Ծն 4.2):

4.- Ո՞վ եղած է աշխարհի մէջ առաջին երաժիշտը:

- Ղամէֆի որդին՝ Յոբալ (Ծն 4.21):

5.- Ո՞վ եղած է առաջին երկաթագործը:

- Թորէլկայէն (Ծն 4.22):

6.- Ո՞վ եղած է Աստուծոյ աղօթող առաջին անձը:

- Սէթ (Ծն 4.26):

7.- Ո՞վ եղած է առաջին եղբայրասպանը:

- Աղամի որդին՝ Կայէն (Ծն 4.8):

8.- Քանի՞ հոգի ջրհեղեղէն ազատեցան:

- Ութը հոգի (Ծն 7.13: Ա.Պտ 3.20):

9.- Ո՞ւր հանգչեցաւ Նոյեան տապանը ջրհեղեղէն
ետէ:

- Արարատ լեռան վրայ (Ծն 8.4):

10.- Ի՞նչ ըրաւ Նոյ երբ տապանէն դուրս եկաւ:

- Սեղան շինեց եւ գոհ մատուցանեց Աստուծոյ (Ծն
8.20):

11.- Ո՞վ եղաւ ջրհեղեղէն ետէ առաջին երկրագործը:

- Նոյ (Ծն 9.20):

12.- Ջրհեղեղէն ետք առաջին անգամ Աստուած որո՞ւ հետ ուխտ կնքեց:

- Նոյի հետ (Ծն 9.1-17):

13.- Ի՞նչ էր այն ուխտի նշանը զոր Աստուած կնքեց Նոյի հետ:

- Ամպի մէջ երեւցող աղեղը [ծիածանը] (Ծն 9.12-14):

14.- Ի՞նչպէս Աստուած դադրեցուց Բաբելոնի աշտարակաշինութիւնը:

- Շինողներուն լեզուն խառնակելով եւ զանոնք «բոլոր երկրի երեսը» ցրուելով (Ծն 11.7-9):

15.- Ո՞վ էր այն անձը որ հրաման ստացաւ Աստուծմէ բաժնուելու իր հարազատներէն եւ իր հօրեմական տունէն եւ երթալու այն երկիրը որ Աստուած ի՛նք ցոյց պիտի տար իրեն:

- Աբրահամ (Ծն 12.1):

16.- Ո՞վ կոչուած է «Բարձրեալ Աստուծոյ փահանան», որ միաժամանակ դիմաւորեց Աբրահամը երբ ան պատերազմէ յաղթական կը դառնար:

- Մելփիսեղեկ (Ծն 14.17-18):

17.- Ի՞նչ էր Աստուծոյ եւ Աբրահամին միջեւ կնքուած ուխտի նշանը:

- Թլփատութիւնը (Ծն 17.10-11):

18.- Որո՞ւ կինը «աղի արձան եղաւ» երբ Աստուած կործանեց Սոդոմն ու Գոմորը:

- Դովտի կինը (Ծն 19.26):

11.- Նահապետական ժամանակաշրջանը

1.- Որո՞նք էին Իսրայելի 12 ցեղերուն նահապետները:
- Ռուբէն, Շմաւոն, Դեւի, Յուդա, Իսաքար, Զաբուլոն, Յովսէփ, Բենիամին, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր (Ծն 35.23-26):

2.- Ո՞վ եղած է հայրը եւ որո՞նք եղած են մայրերը 12 նահապետներուն:
- Հայրը եղած է Յակոբ, իսկ մայրերը՝ Լիա, Ռաֆէլ, Բաղղա եւ Զեղփա (Ծն 35.23-26):

3.- Ո՞վ պնակ մը ապուրի համար ծախեց իր անդրանկութիւնը:
- Եսաւ (Ծն 25.29-34):

4.- Ո՞վ բարեխօսեց Սողոմի եւ Գոմորի համար:
- Աբրահամ (Ծն 19.16-33):

5.- Ո՞վ էր այն նահապետը որուն ծննդեան ատեն մեռաւ իր մայրը:
- Բենիամին (Ծն 35.16-19):

6.- Ո՞ր նահապետին համար Աստուած ըսաւ. «Անիկա մարգարէ է»:
- Աբրահամին համար (Ծն 20.7):

7.- Ո՞ր նահապետը Աստուծոյ հետ գօտեմարտեցաւ:
- Յակոբ (Ծն 32.24-30):

8.- Ո՞ւր փախաւ Յակոբ երբ իր եղբայրը՝ Եսաւ ուզեց զինք սպաննել:

- Միջագետք, իր բեռիին՝ Լաբանին քով (Ծն 28.1-2):

9.- Որո՞նց ծախուեցաւ Յովսէփի եղբայրներուն կողմէ:

- Եգիպտոս գացող Իսմայէլացիներուն (Ծն 37.28):

10.- Եգիպտոս տարուելէ ետք՝ ո՞վ գնեց Յովսէփը:

- Եգիպտացի Պետափրէս դահնապետը (Ծն 39.1):

11.- Պետափրէս դահնապետին կնոջ զրպարտութեան հետեւանքով, Յովսէփի ո՞րքան ատեն մնաց բանտին մէջ:

- Աւելի քան երկու տարի (Ծն 41.1):

12.- Երբ Սովը գորացաւ Քանաանի մէջ, Յովսէփի եղբայրները ո՞ւր գացին ուտելիք նարելու համար:

- Եգիպտոս (Ծն 42.3):

13.- Ո՞վ չընկերացաւ Յովսէփի եղբայրներուն դէպի Եգիպտոս:

- Յովսէփին եղբայրը՝ Բենիամին (Ծն 42.4):

14.- Որո՞նք փոխարինեցին Յովսէփը եւ Ղեւին, ամբողջ պահելով ցեղերուն 12 թիւը:

- Յովսէփին երկու որդիները՝ Եփրեմ եւ Մանասէ (Ծն 48.5):

15.- Ո՞ր նահապետը *«աղօթք ըրաւ Աստուծոյ եւ Աստուած բժշկեց Աբիմելէքը ու անոր կինը եւ անոր աղախիները սկսան ծնանիլ»*:

- Աբրահամ (Ծն 20.17):

16.- Ո՞ր նահապետն Աստուած պահանջեց իր որդին գոհել:

- Աբրահամէն (Ծն 22.1-2):

17.- Ո՞ր նահապետն էր որ խաբեց իր հայրը, որպէսզի կարենայ իր եղբօր օրհնութիւնը ձեռք ձգել:

- Յակոբ (Ծն 27.35-36):

18.- Ո՞ր նահապետն էր որ երագին մէջ երկրէն դէպի երկինք երկարող սանդուխ մը տեսաւ:

- Յակոբ (Ծն 28.10-12):

19.- Ո՞վ ինքզինք կը կոչէ «Եգիպտոսի իշխան»:

- Յովսէփ (Ծն 45.8):

20.- Որո՞նք Դինայի բռնաբարութիւնն վրէժը լուծեցին:

- Շմաւոն եւ Ղեւի (Ծն 34.25):

21.- Ո՞ր նահապետը ամենէն երկարը ապրեցաւ:

- Իսահակ: Ապրեցաւ 180 տարի (Ծն 35.28):

22.- Ո՞ր նահապետը երագին մէջ տեսաւ արեւը, լուսինը եւ աստղերը իրեն կը խոնարհին:

- Յովսէփ (Ծն 37.9):

23.- Քանի՞ հոգիով Յակոբ Եգիպտոս իջաւ:

- 75 հոգիով (Ծն 46.27):

24.- Ո՞ր նահապետի շառաւիղէն պիտի ծնէր Յիսուս:
- Յուդայի շառաւիղէն (Ծն 49.8-12):

25.- Ո՞ր նահապետը կոչուած է «Աստուծոյ իշխանը»:
- Աբրահամ (Ծն 23.6):

12.- Անապատային թափառումներու ժամանակաշրջանը

1.- Ո՞վ առաջնորդեց Իսրայելը Եգիպտոսէն դուրս:
- Մովսէս (Ել 3.10):

2.- Իսրայելի ժողովուրդը ինչո՞վ կ'առաջնորդուէր Սինայի անապատին մէջ:
- Ամպի եւ կրակի սիւներով (Ել 13.21-22):

3.- Եգիպտոսէն դուրս բերուելէ ետք ո՞ր ծովն էր որուն մէջէն ցամաքով անցան Իսրայելացիները:
- Կարմիր ծովը (Ել 14):

4.- Եգիպտոսէն դուրս բերուելէ ետք, առաջին անգամ ո՞ր ժողովուրդը յարձակեցաւ Իսրայելացիներուն վրայ:
- Ամաղէկացիները (Ել 17.8.16):

5.- Ի՞նչ կը կոչուէր այն լեռը որուն վրայ Մովսէս ստացաւ Տասնաբանեայ պատուիրանները:
- Սինա լեռ (Ել 19.23 եւ 20-րդ գլուխ):

6.- Մովսէս քանի՞ օր Սինա լեռը մնաց Տասնաբանեայ պատուիրանները ստանալու համար:
- Քառասուն օր (Ել 24.18):

7.- Ո՞վ շինեց Ոսկի Հորթը երբ Մովսէս Սինա լեռ քարձրացած էր Տանաքանեայ պատուիրանները առնելու:

- Մովսէսի եղբայրը՝ Ահարոն (Ել 32):

8.- Ո՞վ կատարեց Ահարոնի եւ իր որդիներուն քահանայական օծումը:

- Մովսէս (Ղւ 8):

9.- Երբ Իսրայէլացիներ հասան Մեռա ուր ջուրը լեղի էր, ի՞նչ ըրաւ Մովսէս որպէսզի ջուրերը անուշնան:

- Փայտ մը առաւ եւ ջուրերուն մէջ դրաւ եւ «ջուրերը անուշցան» (Ել 15.25):

10.- Ի՞նչ ըրաւ Աստուած երբ Իսրայէլ անապատին մէջ տրտնջաց ուտելիքի նուագութեան համար:

- Անոնց երկինքէն Լորամարգիներ եւ Մանանա, այլ խօսքով՝ միս եւ հաց դրկեց (Ել 16.13-15):

11.- Որո՞նք էին Ահարոնի որդիները որոնք քահանայական կարգ ստացան:

- Նադաբ, Աբիուդ, Եղիազար եւ Իթամար (Թւ 3.2-3):

12.- Որո՞նք անտուրբ կրակ մատուցանած պահուն՝ աստուածային կրակով սպառեցան:

- Ահարոնի որդիները՝ Նադաբ եւ Աբիուդ (Ղւ 10.1-2):

13.- Քահանայական պաշտօնի կանչուած անձերը ո՞ր ցեղէն պէտք էր ըլլային:

- Ղեւիի ցեղէն պէտք էր ըլլային, յատկապէս Ահարոնի ընտանիքէն (Ել 28-29):

14.- Ո՞վ էր այն անձը որ խօսեցաւ Մովսէսի դէմ
Եթովպիացի կին առած ըլլալուն համար, եւ որուն
Աստուած բորոտութեամբ պատժեց:

- Մովսէսի քոյրը՝ Մարիամ (ԹԼ 12.1, 9-10):

15.- Որո՞նք ապստամբեցան Մովսէսի դէմ, եւ որուն
իբրեւ հետեւանք *«անոնց տակի գետինը պատռուեցաւ եւ
երկիրը իր բերանը բացաւ եւ զանոնք... կլլեց»*:

- Կորխ, Դաթան եւ Աբիրոն (ԹԼ 16):

16.- Երբ Մովսէս Իսրայէլի 12 ցեղերը խորհրդանշող
12 գաւազաններ դրաւ Վկայութեան Խորանին մէջ,
անոնցմէ որո՞ւն գաւազանը ծաղկեցաւ:

- Ահարոնի գաւազանը (ԹԼ 17):

17.- Ի՞նչ շինեց Մովսէս որպէսզի կիզող օձերու
կողմէ խայթուող մարդիկը անոր նայելով բուժուէին:

- Պղինձէ օձ (ԹԼ 21.4-9):

18.- Որո՞ւն էշը խօսեցաւ եւ ինչո՞ւ:

- Բաղասամին էշը խօսեցաւ, որովհետեւ իր դիմաց
Տիրոջ հրեշտակը սուրով կանգնած տեսաւ (ԹԼ 22.21-35):

19.- Քանի՞ առիթներով Մովսէս ձեռքի գաւազանով
զարկաւ ժայռի եւ ժայռէն ջուր բղխեցաւ:

- Երկու առիթներով: Քորեբի մէջ (Ել 17.6) եւ Կադէսի
մէջ (ԹԼ 20.11):

20.- Որո՞ւ առաջնորդութեամբ Իսրայէլ սկսաւ
գրաւել Քանաանը եւ որ միաժամանակ պիտի ըլլար
Մովսէսի յաջորդը:

- Յեսուի առաջնորդութեամբ (ԹԼ 27.12-23):

13.- Դատաւորներուն վերաբերեալ

1.- Ո՞վ եղաւ Իսրայէլի առաջին դատաւորը:

- Յեսու:

2.- Ի՞նչպէս Յորդանան գետի ջուրերուն մէջ ցամաք
նամբայ բացուեցաւ որպէսզի Իսրայէլի ժողովուրդը անկէ
անցնի:

- Երբ Ուխտի Տապանակը շալկող քահանաներուն
նոտքերը գետի ջուրերուն մէջ մտան՝ գետին մէջ ցամաք
նամբայ բացուեցաւ (Յես 3.14-17):

3.- Ի՞նչ ըրին Իսրայէլացիներ որպէսզի Երիֆով քա-
ղաքին պարիսպները փուլ գան:

- Եօթը անգամ անոր շուրջ դարձան Ուխտի Տապա-
նակով (Յես 6):

4.- Ո՞ր դատաւորին օրով էր որ Աստուած երկինքէն
կարկուտի նման քարեր թափեց Ամօրհացիներուն վրայ:

- Յեսուի (Յես 10.11):

5.- Ո՞ր դատաւորն էր որ բուրդ դրաւ իր արտին մէջ
եւ խնդրեց Աստուծմէ որ միայն բուրդին վրայ ցօղ իջնէ
իսկ գետինը չոր մնայ, եւ Աստուած կատարեց անոր
խնդրանքը:

- Գեղէօն (Դտ 6.36-38):

6.- Ո՞ր դատաւորին ծնունդը Տիրոջ հրեշտակը ի՛նք
աւետեց:

- Սամփսոնի (Դտ 13.2-3):

7.- Ո՞ր դատաւորին հրամանովն էր որ *«արեւը
երկինքին մէջտեղը կայնեցաւ ու լման մէկ օրուան չափ
չմարեցաւ»*:

- Յեսուի հրամանով (Յես 10.12-13):

8.- Ո՞ր դատաւորին ձեռքով Աստուած ազատեց
Իսրայէլը Մադիանացիներուն ձեռքէն:

- Գեդէօնի ձեռքով (Դտ 7-8):

9.- Ո՞ր դատաւորը առիծ սպաննեց իր ձեռքով:

- Սամփսոն (Դտ 14.5-6):

10.- Ո՞ր դատաւորը խոստացաւ Աստուծոյ որ եթէ
յարձակի Ամմոնացիներուն վրայ եւ յաղթական դառնայ՝
առջեւը ելլող առաջին անձը Տիրոջ գոհ պիտի մատուցանէ:

- Յեփթայէ (Դտ 11.30-31):

11.- Ո՞ր դատաւորն էր որ երբ գոհ մատուցանեց
Տիրոջ, *«վէմէն կրակ ելլելով միսը եւ բաղարջ շօթերը
այրեց»*:

- Գեդէօն (Դտ 6.21):

12.- Ո՞ր դատաւորը ուխտակիր դատաւոր մըն էր
որուն «գօրութիւնը իր մագերուն մէջ կը կայանար»:

- Սամփսոն (Դտ 16.17):

13.- Ո՞ր դատաւորին կը պատկանի հետեւեալ
նշանաւոր խօսքը՝ ուղղուած Իսրայէլի ժողովուրդին. *«Ես*

*ձեր վրայ չեմ թագաւորեր, ո՛չ ալ իմ որդիս ձեր վրայ
պիտի թագաւորէ. ձեր թագաւորը Տէ՛րը թող ըլլայ»:*

- Գեղէօն (Դտ 8.23):

14.- Ո՞վ եղաւ Իսրայէլի վերջին դատաւորը:

- Սամուէլ (Ա.Թգ 7.5-6):

15.- Ո՞վ էր այն դատաւորը որ ձերբակալուեցաւ
Փղշտացիներուն կողմէ եւ աչքերը փորուեցան:

- Սամփսոն (Դտ 16.21):

16.- Իսրայէլ քանի՞ դատաւոր ունեցաւ:

- 15

14.- Թագաւորներուն վերաբերեալ

1.- Ո՞վ եղաւ Եբրայեցիներուն առաջին թագաւորը:

- Սաւուղ (Ա.Թգ 10):

2.- Ո՞վ էր այն թագաւորը որ յարձակեցաւ եւ գրաւեց
Երուսաղէմը եւ գայն իր անունովը կոչեց:

- Դաւիթ (Բ.Թգ 5.9, 6.16):

3.- Ո՞ր թագաւորին օրով Եբրայեցիներու թագաւորու-
թիւնը բաժնուեցաւ երկուֆի:

- Սողոմոնի (Գ.Թգ 11.26-43):

4.- Ո՞ր թագաւորը պարսատիկով տապալեց եւ գլխա-
տեց Գողիաթը:

- Յուդայի թագաւորը՝ Դաւիթ (Ա.Թգ 17):

5.- Ո՞վ էր այն թագաւորը որ «երկու հատ ոսկիէ հորթ շինեց» եւ գանոնք դրաւ Բեթէլի եւ Դանի մէջ, որպէսզի ժողովուրդը գանոնք պաշտէ, փոխանակ Երուսաղէմ երթալու եւ հոն պաշտամունք մատուցանելու:

- Իսրայէլի թագաւորը՝ Յերոբովամ Ա. (Գ.ԹԳ 12.26-30):

6.- Ո՞ր թագաւորին օրով էր որ Եղիան սպաննել տուաւ Բահադի 450 մարգարէները:

- Իսրայէլի Ա. Բաբ թագաւորին օրով (Գ.ԹԳ 18.40):

7.- Ո՞ր թագաւորը «իմաստութիւն» խնդրեց Աստուծոմէ:

- Սողոմոն (Գ.ԹԳ 3.9):

8.- Ո՞ր թագաւորը հիմնեց Սամարիան:

- Իսրայէլի Ամրի թագաւորը (Գ.ԹԳ 16.23-24):

9.- Ո՞վ էր այն թագաւորը որմէ երբ հեռացաւ Աստուծոյ Հոգին, չար ոգի մը եկաւ եւ սկսաւ նեղել զայն:

- Սաւուղ (Ա.ԹԳ 16.14):

10.- Յուդայի ո՞ր թագաւորն էր որ երբ պիտի մահանար, արցունքով աղաչեց Աստուծոյ եւ Աստուած իր կեանքին վրայ 15 տարիներ աւելցուց:

- Եզեկիա թագաւորը (Գ.ԹԳ 20.1-7):

11.- Ո՞վ էր Յուդայի այն թագաւորը որուն որդիները աչքերուն դիմաց մորթուեցան եւ որուն աչքերը կտրուեցան եւ շղթաներով կապուած՝ Նաբուգոդոնոսոր թագաւորին կողմէ Բաբելոն տարուեցաւ:

- Սեդեկիա (Եր 52.10-11):

12.- Յուդայի ո՞ր թագաւորը յարձակեցաւ Փղշտացիներուն վրայ եւ ազատագրեց անոնց ձեռքէն Ուխտի Տապանակը եւ գայն Երուսաղէմ բերաւ:

- Դաւիթ (Բ.Թգ 5.12-16):

13.- Իսրայէլի ո՞ր թագաւորը Բահաղի պաշտամունքը մտցուց Իսրայէլի մէջ:

- Ա.ֆաար (Գ.Թգ 16.30-33, 18.17-22):

14.- Իսրայէլի ո՞ր թագաւորը հրահանգեց գլխատել Ա.ֆաարի ամբողջ սերունդը եւ սպաննել Բահաղի երկրպագուները:

- Յէու (Դ.Թգ 10.1-11, 18-29):

15.- Յուդայի ո՞ր թագաւորին օրով *«իրարու ետեւէն երեք տար սով եղաւ»*:

- Դաւիթ թագաւորին օրով (Բ.Թգ 21.1):

16.- Յուդայի թագաւորներէն ո՞վ ծայրայեղ կռպաշտ էր, որ սակայն զօրաւոր դարձաւ ապրեցաւ եւ ապաշխարեց:

- Մանասէ (Բ.Մն 33.1-17):

17.- Յուդայի թագաւորներէն որո՞ւ օրով եւ ո՞ր գտնուեցաւ Օրէնքի Գիրքը:

- Յովսիա թագաւորին օրով, տանարին մէջ գտնուեցաւ (Դ.Թգ 22.3.10):

18.- Ո՞վ էր այն մարդը որ Դաւիթի դէմ ապստամբեցաւ եւ փորձեց թագաւորութիւնը ձեռք ձգել:

- Նոյնիման Դաւիթի որդին՝ Աբիսողոմ (Բ.Թգ 15.1-12):

19.- Ո՞վ էր այն թագաւորը որ դժուարին խնդիրներ լուծելու պարգեւն ու կարողութիւնը ունէր:

- Սողոմոն (Գ.Թգ 3.16-28):

20.- Ո՞վ էր այն թագաւորը որ 85 քահանաներ սպանեց ստուաւ:

- Սաւուղ (Ա.թգ 22.18):

21.- Ո՞ր թագաւորին օրով շինուեցաւ Երիւզը:

- Իսրայէլի Ա.բաաթ թագաւորին օրով (Գ.Թգ 16.33-34):

22.- Ո՞վ էր Յուդայի այն թագաւորը որ մեծ բարեկարգութիւններ ըրաւ, որ սակայն լիեց իր հաւատքը երբ յանդիմանուեցաւ Անանի մարգարէին կողմէ Ասորիներուն ապաւինելուն համար, եւ նոյնիսկ իր հիւանդութեան ժամանակ ալ Տիրոջ չդարձաւ:

- Ասա թագաւորը (Բ.Մն 14.1-5, 15.8-18, 16.1-13):

23.- Յուդայի ո՞ր թագաւորն էր որ խնդրեց Եսայի մարգարէէն որ ստուերը տասը աստիճան ետ դառնայ, եւ *«Եսայի մարգարէն Տիրոջ աղաղակեց ու ստուերը տասը աստիճան ետ դարձուց»:*

- Եզեկիա թագաւորը (Դ.Թգ 20.8-11):

24.- Յուդայի ո՞ր թագաւորն էր որուն Աստուած *«փորոտիքի հիւանդութեամբ մը զարկաւ, որ անբժշկելի էր...: Իր հիւանդութենէն փորոտիքը դուրս թափեցան ու չարաչար հիւանդութիւնով մեռաւ»:*

- Յովրամ թագաւորը (Բ.Մն 21.18-19):

25.- Ո՞ր թագաւորը համարձակեցաւ խունկ մատուցանել տաճարին մէջ եւ բորոտութեամբ զարնուեցաւ:

- Յուդայի Ոգիա թագաւորը (Բ.Մն 26.16-20):

26.- Ո՞ր թագաւորն էր որ ժողովուրդի կրօնական կեանքը կազմակերպելու յատուկ աշխատանք տարաւ:

- Յուդայի Եզեկիա թագաւորը (Բ.Մն 31):

27.- Ո՞ր թագաւորն էր որ կարդալէ ետք Օրէնքի Գիրքը ժողովուրդին ներկայութեան, ինք եւ ամբողջ ժողովուրդը իրենց ուխտը նորոգեցին Տիրոջ հետ, եւ ասոր կողմէն, կրօնական մեծ բարեկարգութիւն կատարեց:

- Յուդայի Յովսիա թագաւորը (Դ.Թգ 23.1-27):

28.- Ո՞ր թագաւորին օրով Օրէնքի Գիրքը (Հնգամատեանը) պիտի հոչակէր իբրեւ «Ազգային Սահմանադրութիւն»:

- Յովսիա թագաւորին օրով, 621 թուականին:

29.- Ո՞ր թագաւորը քնարահար մըն էր, որ երբ քնարը զարնէր՝ չար ոգիները փախուստ կու տային:

- Դաւիթ (Ա.Թգ 16.14-23):

30.- Յուդայի թագաւորներէն միայն մէկը թագուհի էր: Ի՞նչ էր անոր անունը:

- Գոթողիա (Դ.Թգ 11.1-3):

31.- Քանի՞ թագաւոր ունեցաւ Յուդայի շրջանը:

- 19

32.-Քանի՞ թագաւոր ունեցաւ Իսրայէլի շրջանը:

-18

15.-Մարգարէներուն վերաբերեալ

1.- Մարգարէներ ուրիշ ի՞նչ անունով անչցուած էին:

-Տեսանոյ (Ա.Թգ 9.9: Բ.Թգ 24.11: Դ.Թգ 17.13: Ա.Մն 25.5 եւայլն):

2.- Տեսանք թէ Հիւն Կտակարանի մարգարէներէն չորսը՝ Նսայի, Երեմիա, Եզեկիէլ եւ Դանիէլ կոչուած են «մեծ մարգարէներ»: Արդ, ասոնցմէ ո՞վ ֆահանայ էր:

-Եզեկիէլ (Եզ 1.3):

3.- Ո՞ր մարգարէն էր որ Աստուծոյ ըսաւ. *«Եթէ անոնց մեղքերը պիտի ներես՝ ներէ՛, իսկ եթէ ոչ՝ կ'աղաչես՛, աւրէ՛ գիս քու գրած գիրքէդ»*:

-Մովսէս (Ել 32.31-32):

4.- Ո՞ր մարգարէին օրով Պաղեստինի վրայ երեք ու կէս տարի անձրեւ չտեղաց:

-Եղիայի օրով (Յկ 5.17: Գ.Թգ 17.1):

5.- Ո՞ր մարգարէն չոր ջրհորի մը մէջ նետուեցաւ:

-Երեմիա (Եր 38):

6.- Ո՞ր մարգարէն էր որ իր գաւազանով ապառաժի մը զարկաւ եւ անկէ ջուր բղխեցուց:

-Մովսէս (Ել 17.6):

7.- Ո՞ր մարգարեն «չորցած ոսկորներուն տեսիլք» կ'ունենայ, որ մեռելներու յարութեան նախապատկերացումն է:

- Եզեկիէլ (Եզ 37):

8.- Ո՞ր մարգարեն երեք տարի մերկ շրջեցաւ:

- Եսայի (Ես 20.2-3):

9.- Ո՞ր մարգարեն ըսած է. «Սմէն գիշեր կը լուամ իմ անկողինս. արցունքներովս կը թրջեմ իմ մահինս»:

- Դաւիթ (Սղ 6.6):

10.- Ո՞ր մարգարեն կը գործէր Երուսաղէմի պարիսպներու վերաշինութեան շրջանին:

- Մաղաքիա:

11.- Ո՞ր մարգարեն է որ կը մարգարէանայ Իսրայէլի եւ Յուդայի դատաստանին ու դատապարտութեան մասին, բայց միաժամանակ վերականգնումի յոյս կը ներշնչէ:

- Միքիա (1.2-16, 3.1-12, 4.6-13, 5.2-15 եւայլն):

12.- Ո՞ր մարգարեն Յիսուսի նման փչ հացով մեծ բազմութիւն կերակրեց:

- Եղիսէ (Գ.Թգ 4.42-44):

13.- Ո՞ր մարգարեն առիւծներու գուրը նետուեցաւ:

- Դանիէլ (Դն 6.16-18):

14.- Ո՞ր մարգարեն էր որ եզան լուծ կրեց:

- Երեմիա (Եր 27.1-3):

15.- Ո՞վ կենդանացուց որբեւարի կնոջ մը որդին:

- Եղիա մարգարեն (Գ.Թգ 17.17-24):

16.- Ո՞ր մարգարեին օրով երկինքէն մանանայ տեղաց Իսրայէլի վրայ:

- Մովսէսի (Յլ 16.4-21):

17.- Ո՞ր մարգարեին գիրքը գրեթէ ամբողջութեամբ կը խօսի Տիրոջ օրուան, այլ խօսքով՝ երկրորդ գալուստին մասին եւ այդ գալուստը կանխող երեւոյթներուն մասին:

- Սոփոնիա (Սփ 1-3):

18.- Ո՞վ էր այն մարգարէն որուն գերեզմանին մէջ երբ մեռեալ մը նետեցին, մեռեալը իր «*ոսկորներուն դպածին պէս կենդանացաւ*»:

- Եղիսէ (Դ.Թգ 13.21):

19.- Ո՞ր մարգարէն կ'ունենայ գալիք Բարի Հովիւին տեսիլքը:

- Եզեկիէլ (Եզ 34.11-31):

20.- Ո՞ր մարգարէն շատ կու լար եւ ատոր համար ալ կոչուած է «Լալկան մարգարէ»:

- Երեմիա (Եր 6.26, 9.1):

21.- Ո՞ր մարգարէն էր որուն երբ Աստուած ուզեց դրկել Նինուէ որպէզի անոր բնակիչներուն ապաշխարութիւն ֆարոգէ, մարգարէն փախուստ տուաւ դէպի Թարսիս:

- Յովնան (Յվն 1.1-3):

22.- Ո՞ր մարգարէն հրեղէն կառքերով երկինք բարձրացուեցաւ:

- Եղիա (Դ.Թգ 2.11):

23.- Ո՞ր մարգարէին էր որ Աստուած ըսաւ. *«Դուն իմ երեսս չես կրնար տեսնել. վասնզի մարդ չի կրնար երեսս տեսնել ու ապրիլ»:*

- Մովսէսի (Ել 33.18-20):

24.- Ո՞ր մարգարէն էր որ վերակենդանացուց Սունամացի հարուստ կնոջ մը որդին:

- Եղիսէ (Դ.Թգ 6.32-37):

25.- Ո՞ր մարգարէն է որ կ'ունենայ «ապագայ տանարին տեսիլք»:

- Եզեկիէլ (Եզ 40-43):

26.- Ո՞ր մարգարէն էր որ իր ձեռքով արջ ու առիւծ կը սպանէր երբ իր հօտը յարձակումի ենթարկուէր:

- Դաւիթ (Ա.Թգ 17.34-36):

27.- Ո՞ր մարգարէն էր որ Աստուծոյ հրահանգով երկու անգամ պոռնիկ կին առաւ, պատկերացնելու համար Իսրայէլի գործած «պոռնկութեան» մեղքը Աստուծոյ դէմ:

- Ովսէա (Ովս 1.2, 3.1):

28.- Ո՞ր մարգարէները կը գործէին Պաղեստինի մէջ Երուսաղէմի տանարին վերաշինութեան ժամանակաշրջանին:

- Անգէա եւ Զաֆարիա:

29.- Ո՞վ էր այն մարգարեն որ հրամայեց որ Եդովմի անջուր անապատին մէջ գետնի վրայ փոսեր բանան որպէսզի անոնք ջուրով լեցուին, եւ *«ահա Եդովմի նամբայէն ջուրեր եկան եւ երկիրը ջրով լեցուեցաւ»*:

- Եդիսէ (Դ.Թգ 3.16-20):

30.- Ո՞ր մարգարեն կարգադրեց Ուրիայի մահը որպէսզի անոր կինը առնէր:

- Դաւիթ (Բ.Թգ 11):

31.- Ո՞ր մարգարեն իր գիրքը կը փակէ խօսելով Յովհաննէս Մկրտիչը դրկելու խոստումին մասին:

- Մադաֆիա (Մդ 4.5-6):

32.- Ո՞ր մարգարեն է որ կը յայտնէ թէ Աստուած պիտի կործանէ Նինուէի բնակիչները, Յուդայի դէմ իրենց մղած անգութ պայքարին համար:

- Նահում (Նհ 1-3):

33.- Ո՞ր մարգարեն էր որ խնդրեց Եղիա մարգարէի ոգիին կրկնապատիկը ունենալ:

- Եդիսէ (Դ.Թգ 2.9):

34.- Ո՞վ էր այն մարգարեն որ թունաւորուած կաթսայի մը մէջ ալիւր կը դնէ եւ կաթսային կերակուրը կը դադրի թունաւոր ըլլալէ:

- Եդիսէ (Դ.Թգ 4.39-41):

35.- Բարեւոյնի գերութեան ընթացքին ո՞ր մարգարէները եղան Աստուծոյ խօսակները:

- Եզեկիէլ (Եզ 1.1-3) եւ Դանիէլ (1.1-7, 5.13-30 եւ այլն):

36.- Ո՞ր գետին մէջ եւ որո՞ւ պատուերով Ասորի բորոտ Նէեման լուացուեցաւ 7 անգամ որպէսզի բժշկուէր:
- Յորդանանի գետին մէջ, Եղիսէի պատուերով (Գ.ԹԳ 5):

37.- Ո՞ր մարգարէն Տիրոջ հրահանգով ֆթանէ գօտի մը առաւ եւ զանիկա Եփրատի մօտիկ տեղ մը թաղեց:
- Երեմիա (Եր 13.1-5):

38.- Ո՞ր մարգարէն խօսեցաւ Իսրայէլի հարուստ դեկավարներուն դատաստանին մասին, եւ կոչ ուղղեց անոնց չանտեսելու աղփատները:
- Ամովս (2.6-16, 3.9-15, 4.1-3 եւայլն):

39.- Ո՞ր մարգարէն էր որ զղջումի եւ ապաշխարութեան կոչ ուղղեց Յուդայի բնակիչներուն եւ ֆահանաներուն, երբ անոնց ցանֆերը մարախազգիներու կողմէ փնացումի ենթարկուեցաւ:
- Յովել (Յվլ 1.13-14, 2.1-11):

40.- Ո՞ր մարգարէն էր որ կերակրուեցաւ ագռաներու կողմէ:
- Եղիա (Գ.ԹԳ 17.4):

41.- Ո՞ր մարգարէին ինդրանֆով Աստուած «ստուերը տասը աստիճան ետ դարձուց»:
- Եսայի մարգարէին ինդրանֆով (Գ.ԹԳ 20.11):

42.- Ո՞ր մարգարէն էր որ ինդրեց Աստուծմէ որ Սուրիական բանակը կուրութեամբ զարնէ եւ Աստուած զարկաւ, եւ մարգարէն զանոնֆ Սամարիա տարաւ:

- Եղիսէ (Դ.Թգ 6.18-19):

43.- Ո՞ր մարգարէները երեւցան Յիսուսի այլակերպութեան ատեն:

- Մովսէս եւ Եղիա մարգարէները (Մտ 17.3):

44.- Ո՞ր մարգարէն էր որ «երկու կողով թուզի» տեսիլքը տեսաւ:

- Երեմիա (Եր 24.1-10):

45.- Ո՞ր մարգարէին միջոցաւ Աստուած խստիւ կը յանդիմանէ ֆահանաները անոնց անտարբեր վերաբերմունքին համար:

- Մաղաքիա (1.6-14, 2.1-9):

46.- Ո՞ր մարգարէն խօսեցաւ Եղովի դատաստանին ու պատժուելուն մասին:

- Աբդիա:

47.- Ո՞ր մարգարէն էր որուն Աստուած հրահանգեց տոմս մը ուտել:

- Եզեկիէլ (3.1-3):

48.- Ո՞ր մարգարէն երկխօսութեան մէջ մտնելով Աստուծոյ հետ՝ իր գանգատը կը ներկայացնէ Աստուծոյ եղած անարդարութեանց համար, եւ Աստուած կը պատասխանէ անոր:

- Ամբակում (1-2):

49.- Գերութենէ վերադարձին, ո՞ր մարգարէն էր որ տանարը վերակառուցելու կոչ ուղղեց:

- Անգէա (Անգ 1.1-4):

50.- Ո՞վ էր այն մարգարեն որ Մովսրի թագաւորին կողմէ հրաւիրուեցաւ անիծելու Իսրայէլի մարդիկը բայց անիծելու փոխարէն՝ չորս անգամ օրհնեց զանոնք:

- Բաղասամ (Թւ 23.5-12, 18-26, 24.2-10, 15-25):

51.- Ո՞ր մարգարէն էր որ կոտորեց Բահադի 450 մարգարէները:

- Եղիա (Գ.Թգ 18.40):

52.- Ո՞վ էր այն մարգարէն որ երբ «տապարին երկաթը ջուրին մէջ ինկաւ», փայտ մը կտրեց ու ջուրին մէջ նետեց եւ երկաթը ջուրին երեսը ելաւ:

- Եղիսէ (Դ.Թգ 6.6):

53.- Ո՞ր մարգարէները Բաբելոնի գերութեան տարիներուն Աստուծոյ խօսնակներն էին:

- Եզեկիէլ եւ Դանիէլ:

54.- Ո՞վ էր այն մարգարէն որ իր ձեռքը ծոցը կը դնէր եւ «*իբ ձեռքը ձիւնի պէս ներմակ՝ բորոտ*» կ'ըլլար, ապա ձեռքը դարձեալ ծոցը կը դնէր եւ ձեռքը առաջուան պէս կը դառնար:

- Մովսէս (Ել 4.6-7):

55.- Ո՞ր մարգարէին օրով տեղի կ'ունենայ Երուսաղէմի եւ տաճարի կործանումը:

- Երեմիայի օրով (Եր 52):

56.- Ո՞վ էր այն մարգարէն որուն երբ եկան եւ ըսին. «*Ջուրերը գէշ ու երկիրը անպտուղ է*», ան աղ նետեց ջուրերու աղբիւրին վրայ եւ «*ջուրերը բժշկուեցան*»:

- Եղիսէ (Դ.Թգ 2.19-22):

57.- Ո՞ր մարգարէն նաւաստիներու կողմէ փոթորկած ծովուն մէջ նետուելէ ետք՝ կուլ տրուեցաւ կէտանկի մը կողմէ:

- Յովնան (Յվն 1.15-17):

16.- Տանարին վերաբերեալ

1.- Ո՞վ էր այն մարգարէն որ սրտանց փափաքեցաւ Աստուծոյ տանար կառուցել եւ սակայն Աստուած արգիլեց իրեն:

- Դաւիթ (Ա.Մն 22.7-8):

2.- Ո՞ր թագաւորը եւ ո՞ր թուականին կառուցեց Երուսաղէմի տանարը:

- Սողոմոն (Դ.Թգ 6.1-13: Ա.Մն 28.6, 10): Կառուցեց 966-ին:

3.- Քանի՞ տարի տեւեց տանարին կառուցումը:

- Եօթը տարի (Դ.Թգ 6.38):

4.- Ո՞ւր կառուցուեցաւ տանարը:

- Երուսաղէմի Մօրիա լեռան վրայ (Բ.Մն 3.1):

5.- Յուդայի ո՞ր թագաւորը տանարին փլած տեղերը նորոգեց:

- Յովաս թագաւոր (Դ.Թգ 12.4-14): Նորոգութիւնը տեղի ունեցաւ 9-րդ դարու աւարտին:

6.- Յուդայի ո՞ր թագաւորը գահ բարձրանալուն պէս՝ տանարին մաքրութիւնը կատարեց:

- Եզեկիա թագաւոր (Բ.Մն 29.3-17): Մաքրութիւնը կատարեց 8-րդ դարու աւարտին:

7.- Յուդայի ո՞ր թագաւորը տանարին մէջ «Բահաղին սեղաններ եւ Աստարովթին կուռք մը շինեց»:

- Մանասէ թագաւոր (Դ.Թգ 21.3): 7-րդ դար:

8.- Յուդայի ո՞ր թագաւորը տանարէն հեռացուց Բահաղին սեղաններն ու Աստարովթին կուռքը, պայքարեցաւ կռապաշտութեան դէմ եւ կրօնական մեծ բարեկարգութիւն կատարեց:

- Յովսիա թագաւոր (Դ.Թգ 23.4-8: Բ.Մն 34-35): 621 թուականին:

9.- Ի՞նչ էր անունը այն քահանայապետին որ տանարը մաքրած ատեն գտաւ Օրէնքի Գիրքը (Հնգամատեանը):

- Քեղկիա (Բ.Մն 34.14: Դ.Թգ 22.8):

10.- Որո՞ւ հրամանով եւ ո՞ր թուականին աւերուեցաւ Աստուծոյ տաճարը:

- Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին հրամանով (Դ.Թգ 25.8-9: Բ.Մն 36.7): Աւերուեցաւ 587-ին:

11.- Ո՞վ Աստուծոյ տանարին անօթները Բաբելոն տարաւ:

- Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը (Բ.Մն 36.7):

12.- Գերութենէ վերադարձին, որո՞ւ առաջնորդութեամբ տեղի ունեցաւ տաճարին վերակառուցումը:

- Յուդայի իշխան՝ Զօրաբաբէլի եւ մեծ քահանայ՝ Յեսուի առաջնորդութեամբ (Անգ 1.12-15):

13.- Ո՞ր թագաւորին արտօնութեամբ տեղի ունեցաւ տաճարին վերակառուցումը:

- Պարսկաստանի Կիրոս թագաւորին (Եզր 5.13):

14.- Ո՞ր թուականին տաճարը վերակառուցուեցաւ:

- 520-516 թ.:

15.- Վերակառուցուած տաճարը ե՞րբ դարձեալ վնասներ կրեց:

ա.- Յոյներու տիրապետութեան ժամանակ, Ք.Ա. 333 թ.:

բ.- Եւ Հռոմայեցիներու տիրապետութեան ժամանակ, Ք.Ա. 63 թ.:

16.- Ո՞վ վերաշինեց վնասուած ու քայքայուած տաճարը:

- Հերովդէս Մեծ:

17.- Ո՞ր թուականին սկսաւ տաճարին վերաշինութիւնը երրորդ անգամ ըլլալով:

- Սկսաւ Ք.Ա. 20 թուականին, եւ տեւեց մինչեւ Ք.Ն. 64 թ.:

18.- Քանի՞ գլխաւոր բաժիններ ունէր Հերովդէս Մեծի շինած տաճարը:

- Երեք: 1) Գաւիթ, 2) Սրբարան, 3) Բուն Սրբարան:

19.- Ի՞նչ կ'ըլլար տանարի Գաւիթին մէջ:

- Զոհարանը:

20.- Ի՞նչ կ'ըլլար տանարի Սրբարանին մէջ:

- Խունկերու սեղանը, առաջաւորութեան հացերու սեղանը, եւ ոսկի աշտանակը:

21.- Ի՞նչ կար գետեղուած տանարին «Սրբութիւն Սրբութեանց» կամ «Բուն Սրբարան» կոչուած բաժնին մէջ:

- Ուխտի Տապանակը (Բ.Մն 5.7): (Այս հանգրուանին սակայն, Ուխտի Տապանակը արդէն դադրած էր գոյութիւն ըլլալէ):

22.- Որո՞նց ձեռքով եւ ո՞ր թուականին վերջնականօրէն կործանեցաւ տանարը:

- Հոռոմայեցիներուն ձեռքով: 70 թուականին:

17.- Երբայեցիներուն

թագաւորութեան վերաբերեալ

1.- Ո՞ր թուականին սկիզբ առաւ Երբայեցիներուն թագաւորութիւնը:

- 1050-ին:

2.- Ո՞ր թագաւորին օրով եւ ո՞ր թուականին Երբայեցիներուն թագաւորութիւնը բաժնուեցաւ երկուֆի:

- Սողոմոնի օրով, 930-ին (Գ.Թգ 11.26-43):

3.- Ի՞նչ կոչուեցան բաժանեալ երկու թագաւորութիւնները:

- «Յուդայի թագաւորութիւն» եւ «Իսրայէլի թագաւորութիւն»:

4.- Ուրիշ ի՞նչ անունով ծանօթ էր Յուդայի թագաւորութիւնը:

- Հարաւի թագաւորութիւն:

5.- Ուրիշ ի՞նչ անունով ծանօթ էր Իսրայէլի թագաւորութիւնը:

- Հիւսիսի թագաւորութիւն:

6.- Թագաւորութեան երկուքի բաժանումէն ետք, ո՞վ եղաւ Յուդայի (հարաւի) առաջին թագաւորը:

- Ռոբուամ (Գ.Թգ 11.43):

7.- Թագաւորութեան երկուքի բաժանումէն ետք, ո՞վ եղաւ Իսրայէլի (հիւսիսի) առաջին թագաւորը:

- Յերոբոամ (Գ.Թգ 12.20):

8.- Ո՞ր ցեղերը կ'իյնային Յուդայի (Հարաւի) թագաւորութեան կազմին մէջ:

- Յուդայի եւ Բենիամինի ցեղերը (Գ.Թգ 12.21):

9.- Ո՞ր ցեղերը կ'իյնային Իսրայէլի (Հիւսիսի) թագաւորութեան կազմին մէջ:

- Բացի Յուդայի եւ Բենիամինի ցեղերէն՝ միւս 10 ցեղերը (Գ.Թգ 11.31):

10.- Ո՞ր քաղաքներ էր Յուդայի թագաւորութեան մայրաքաղաքները:

- Երուսաղէմ:

11.- Ո՞ր ֆաղաֆն էր Իսրայելի թագաւորութեան մայրաֆաղաֆը:

- Սամարիա:

12.- Ո՞ր թուականին եւ ո՞վ կործանեց Յուդայի թագաւորութիւնը:

- 587-ին, Բաբելոնի Նաբուգոդոնոսր թագաւորը:

13.- Ո՞ր թուականին եւ ո՞վ կործանեց Իսրայելի թագաւորութիւնը:

- 722-ին, Ասորեստանի Սարգոն Բ. թագաւորը:

18.- **Թագաւորութեան անկումէն**

մինչեւ Պասեղտիւնի գրաւումը

1.- Քանի՞ հանգրուաններով Բաբելոնի Նաբուգոդոնոսր թագաւորը գերեզարեց Երուսաղէմի հրեաները:

- Երեք հանգրուաններով: 598-ին, 587-ին, 583-ին Ք.Ա.:

2.- Ո՞վ եւ ո՞ր թուականին գրաւեց Բաբելոնը:

- Մարերու եւ Պարսից Կիւրոս թագաւորը, 539-ին:

3.- Քանի՞ հանգրուաններով Բաբելոն գերի տարուած հրեաները Երուսաղէմ վերադարձան:

- Երեք հանգրուաններով.-

ա.- Առաջին խումբ մը գերութենէն վերադարձաւ Զորաբաբելի առաջնորդութեամբ, 538-ին, Պարսիկներու եւ Մարերու Կիւրոս թագաւորին հրովարտակով:

բ.- Երկրորդ խումբ մը վերադարձաւ Եզրասի առաջնորդութեամբ, 458-ին:

գ.- Գերիներու վերջին խումբը վերադարձաւ Նեեեմիայի առաջնորդութեամբ, 432-ին:

4.- Ո՞ր թուականներուն եւ որո՞ւ առաջնորդութեամբ վերաշինուեցան Երուսաղէմի պարիսպները:

- 445-443 թուականներուն, Նեեեմիա մարգարէի առաջնորդութեամբ:

5.- Ո՞վ գրաւեց Պաղեստինը 333 թուականին:

- Աղեֆսանդր Մակեդոնացին:

6.- 323-198 թուականներուն Պաղեստինը որո՞ւ իշխանութեան տակ կը գտնուէր:

- Եգիպտոս նստող Պտղոմեաններու իշխանութեան տակ:

7.- 198-166 թուականներուն որո՞նք Պաղեստինը կ'առնեն իրենց իշխանութեան տակ:

- Սուրիա նստող Սելեւկեանները:

8.- Ի՞նչ էր այն թագաւորին անունը որ 167 թուականին Աստուծոյ պաշտամունքը կ'արգիլէ եւ Երուսաղէմի տանարը կը պղծէ, անոր մէջ խոզ մը մորթել տալով:

- Անտիոքոս Դ. Եպիփանէս:

9.- Անտիոքոս Դ. Եպիփանէսի ըրած սրբապղծութիւններուն պատճառով, որո՞ւ առաջնորդութեամբ ապստամբութիւն եղաւ Սելեւկեաններուն դէմ եւ ո՞ր թուականին:

- Մատաթիա ֆահանայի առաջնորդութեամբ, 167 թուականին:

10.- Ո՞վ յաջորդեց Մատթիա ֆահանային, որ գորաւոր պայքարով կրցաւ Սելեւկեաններու ստրկութեան լուծը կտրել եւ իշխանութեան գլուխ գալ:
- Իր որդին՝ Յուդա Մակարէ:

11.- Յուդայի ընտանիքը (Հասմոնեական գերդաստանը) ո՞ր թուականներուն կ'իշխէ Պաղեստինի վրայ:
- 166-63 թուականներուն:

12.- Ո՞վ 63 թուականին կը գրաւէ Երուսաղէմն ու ամբողջ Պաղեստինը:
- Հռոմայեցի գորավար՝ Պոմպէոս:

19.- Ուխտի Տապանակին վերաբերեալ

1.- Ո՞վ շինեց Ուխտի Տապանակը:
- Բեսելիէլ անունով անձ մը, ուրիշներու օգնութեամբ (Ել 37.1-9):

2.- Ուրիշ ի՞նչ անունով ծանօթ էր Ուխտի Տապանակը:
- Վկայութեան Խորան, որովհետեւ վրանի տակ կը մնար (Բ.Մն 5.4-5: Հմմտ Ա.Մն 15.1):

3.- Ի՞նչ բաներ դրուած էին Ուխտի Տապանակին մէջ:
ա.- Տասնաբանեայ պատուիրաններուն ֆարեղէն 2 տախտակները (Բ.Օր 10-1-5):

բ.- Մանանայով (հացով) լեցուն ոսկեայ սափորը (Ել 16.32-35):

գ.- Եւ Ահարոնի ծաղկեալ գաւազանը (Թւ 17.10: Տե՛ս Երբ 9.4):

4.- Ի՞նչ կը խորհրդանշէր Ուխտի Տապանակը:

- Աստուծոյ ներկայութիւնը:

5.- Ի՞նչ կը կոչուէր Ուխտի Տապանակին կափարիչը:
- «Քաւութիւն» (Ել 25.17, 37.6):

6.- Ի՞նչ կը խորհրդանշէր Ուխտի Տապանակին կափարիչը:
- Աստուծոյ աթոռը:

7.- Ինչո՞ւ Ուխտի Տապանակին կափարիչը կը կոչուէր «Քաւութիւն»:
- Որովհետեւ տարին անգամ մը փահանայապետը ներքին Սրբարան պիտի մտնէր եւ զոհերու արիւնը սրսկէր Տապանակին առջեւ ժողովուրդի մեղքերու փաւութեան համար (ՂԼ 16):

8.- Ի՞նչ կար Ուխտի Տապանակին կափարիչին վրայ ֆանդակուած:
- Զուտ ոսկիէ շինուած երկու ֆերովքէներ (Ել 37.7-9):

9.- Որո՞նք կը շալկէին Ուխտի Տապանակը:
- Ղեւտացի փահանաները (Բ.Մն 5.7: Յես 3.14: Ա.Մն 15.2):

10.- Կրնա՞ք յիշել Ուխտի Տապանակին միջոցաւ կատարուած մէկ-երկու հրաշքներ:

ա.- Երբ Ուխտի Տապանակը շալկող փահանաներուն ոտքերը Յորդանանի ջուրերուն մէջ մտան՝ գետին մէջ անմիջապէս ցամաք նամբայ բացուեցաւ:

բ.- Երբ Իսրայէլի ժողովուրդը Ուխտի Տապանակով եօթը անգամ դարձաւ Երիֆով ֆաղափին շուրջ՝ ֆաղափին պարիսպները փուլ եկան:

11.- Որո՞նք գերեզարեցին Ուխտի Տապանակը Սամուելի օրով:

- Փղտացիները (Ա.ԹԳ 4.1-11):

12.- Ի՞նչ էր այն ֆահանային անունը որ երբ լսեց Փղտացիներուն կողմէ Ուխտի Տապանակին գերեզարու-
թեան մասին՝ աթոռէն վար ինկաւ եւ մեռաւ:

- Հեղի (Ա.ԹԳ 4.18):

13.- Ինչո՞ւ Փղտացիները Ուխտի Տապանակը դարձուցին Իսրայէլին:

- Որովհետեւ Աստուած թանջփով հարուածեց գիրեմբ:

14.- Դաւիթ իր թագաւորութեան օրով ո՞ւր գետեղեց Ուխտի Տապանակը:

- Երուսաղէմի Սիոն լեռան վրայ իր կանգնեցուցած վրանին մէջ (Բ.ԹԳ 6.17: Ա.Մն 15.1):

15.- Մինչեւ ե՞րբ Ուխտի Տապանակը մնաց Սիոն լեռը՝ վրանին մէջ:

- Մինչեւ Սողոմոնի ձեռքով տաճարին շինուիլը:

16.- Տաճարի շինութենէն ետք, ո՞ւր գետեղուեցաւ Ուխտի Տապանակը:

- «Արբութիւն Արբութեանց» կոչուած ներքին Արբարանին մէջ (Բ.Մն 5.7: Երբ 9.3-4: Գ.ԹԳ 8.6):

17.- Ի՞նչ եղաւ քակատագիրը Ուխտի Տապանակին:

- Երբ Նաբուգոդոնոսոր աւերեց Երուսաղէմը եւ այրել տուաւ տաճարը՝ Ուխտի Տապանակը անյայտացաւ:

18.- Երբ հետագային տաճարը վերակառուցուեցաւ, նոր Ուխտի Տապանակ մը շինուեցա՞ւ մէջը դրուելու համար:

- Ոչ: Տաճարի հրկիզումէն ետք, հրեաները վերջնականապէս զրկուեցան Ուխտի Տապանակէն:

20.- Ընդհանուր հարցումներ

1.- Ո՞վ քանչեւ լաւ է «Մեծ Դպիր» անունով, որ միաժամանակ հանդիսացաւ Աստուածաշունչ գիրքերուն հաւաքման ախոյեանը եւ եղաւ հիմնադիրը մեկնութեան:

- Եզրաս Քահանայ (Նե 8.1-2, 8-9):

2.- Որո՞նք Նաբուգոդոնոսորին հրամանով կրակի հնոցին մէջ նետուեցան:

- Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով (Դն 3):

3.- Ո՞վ հրեայ դեկավարներուն խորհուրդ տուած էր ըսելով.- *«Աւելի լաւ է՝ որ մէկ հոգի մեռնի ժողովուրդին համար, քան թէ ամբողջ ազգը կորսուի»* (Յհ 11.49-50):

- Կայիափա (Յհ 18.14):

4.- Որո՞ւ տան մէջ կ'ընթեր Յիսուս երբ մեղաւոր կին մը եկաւ եւ անոր ոտքերը անուշահոտ իւղով օծեց:

- Փարիսեցի Սիմոնին տան մէջ (Դկ 7.36-40):

5.- Ի՞նչ է Սուրբ Կոյս Մարիամին հորը եւ մօրը անուանը:

- Յովակիմ եւ Աննա:

6.- Ի՞նչ է Յովհաննէս Մկրտիչին հորը եւ մօրը անուանը:

- Զաքարիա եւ Եղիսաբէթ (Ղկ 1.5):

7.- Ի՞նչ են անունները այն կիներուն որոնք կ'ընկերանային եւ կը սպասաւորէին Յիսուսին եւ իր աշակերտներուն:

- Մարիամ Մագդաղենացի, Յովհաննա, Շուշան եւ ուրիշներ (Ղկ 8.2-3):

8.- Կրնա՞ս թուել անունները Յիսուսի «եղբայրներուն»:

- Յակոբոս, Յովսէս, Սիմոն եւ Յուդա (Մտ 13.55):

9.- Որո՞ւ սերունդէն էր Մարիամի նշանածը՝ Յովսէփ:

- Դաւիթի սերունդէն (Ղկ 1.27):

10.- Քանի՞ Յակոբոսներ ունինք Աւետարաններուն մէջ:

- Երեք:

ա.- Յիսուսի «եղբայրը՝» Յակոբոս (Գղ 1.19: Մտ 13.55):

բ.- Յովհաննէսի եղբայրը՝ Յակոբոս (Մտ 10.3):

գ.- Ալփէոսի որդին՝ Յակոբոս (Ղկ 6.15):

11.- Ի՞նչ էր այն մաքսապետին անունը որ Յիսուսը տեսնելու համար ծառ բարձրացաւ:

- Զակվէոս (Ղկ 19.1-4):

12.- Որո՞նք Հին Կտակարանի մէջ մարմինով երկինք
յափշտակուեցան:

- Ենովք (Ծն 5.24) եւ Եղիա (Դ.Թգ 2.11):

13.- Որո՞նց յանձնուեցաւ Վկայութեան Խորանին եւ
«բոլոր սուրբ բաներուն... պահպանութիւնը» կատարելու
պարտականութիւնը:

- Ղեւտացիներուն (Թւ 18):

14.- Ո՞վ կառուցած է Բեթլեհէմ քաղաքը:

- Սողոմոնի որդին՝ Ռոբովամ (Բ.Մն 11.5-10):

15.- Ի՞նչ էր այն հրեայ թագուհիին անունը որ
ագատեց հրեաները մեծ ջարդէ մը:

- Եսթեր:

16.- Ո՞ւր կառուցեցին Սամարացիներ իրենց տաճա-
րը:

- Սիււքեմ քաղաքի Գարիզիմ լեռան վրայ:

17.- Ո՞վ եւ ե՞րբ կործանեց Սամարացիներուն տաճա-
րը:

- Զայն կործանեց Մակաբայեցիներուն Հիրկանոս
թագաւորը, Ք.Ա. 129 թուականին:

18.- Ի՞նչ էր անունը այն մարդուն որ մուրթէն
կախելու համար պատրաստած էր «յիսուն կանգուն բարձր
փայտ» մը, որ սակայն ի՛նք կախուեցաւ իր պատրաստած
փայտին վրայ:

- Համան (Եսթ 7.9-10):

19.- Ի՞նչ կը կոչուէր այն լեռը որուն վրայ կարդացուեցաւ Օրէնքի գիրքը:

- Գեբաղ (Յես 8.30-34):

20.- Ե՞րբ կը խաչուի Յիսուս

- Զատիկի տօնին, 30 թուականին:

21.- Ի՞նչ էր Պօղոս առաքեալին նախկին անունը:

- Սօղոս (Գրծ 9.4):

22.- Ո՞ւր ծնած է Պօղոս առաքեալ:

- Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ (Գրծ 22.3):

23.- Որո՞ւ աշակերտ եղած է Պօղոս առաքեալ:

- Գամաղիէլի (Գրծ 22.3):

24.- Ե՞րբ եւ ո՞ւր դարձի կու գայ Սօղոս (Պօղոս առաքեալ):

- 37 թուականին, Դամասկոսի քամբուն վրայ:

25.- Պօղոս առաքեալ քանի՞ առաքելական քամբորդութիւններ կատարեց:

- Երեք: (45-49 թ.), (50-52 թ.), (53-58 թ.):

26.- Ո՞ր թուականին Պօղոս առաքեալ կը ձերբակալուի Երուսաղէմի տաճարին մէջ եւ ո՞ւր կը դրկուի:

- Կը ձերբակալուի 58 թուականին: Կը դրկուի Կեսարիա՝ Ֆելիքս կուսակալին մօտ:

27.- Ո՞ր թուականին Պօղոս առաքեալ մամբայ կը հանուի տարուելու համար Հոռոմ, որպէսզի դատուի կայսերական ատեանին կողմէ:

- 60 թուականին:

28.- Ո՞ր թուականին եւ որո՞ւ հրամանով գլխատուեցաւ Պօղոս առաքեալ:

- 67 թուականին, Ներոն կայսրին հրամանով:

29.- Ո՞ր թուականներուն հրեաներ ապստամբեցան Հոռոմի դէմ, եւ ատիկա պատճառ եղաւ որ Երուսաղէմ գրաւուի եւ տանարը միանգամընդմիշտ կործանի:

- 66-70 թուականներուն:

30.- Նոր Կտակարանի մէջ ուրիշ ի՞նչ անունով ծանօթ է «Բեթլեհէմ»ը:

- Դաւիթի Քաղաք (Ղկ 2.11):

31.- Հին Կտակարանի մէջ «Դաւիթի Քաղաք» ըսելով ո՞ր շրջանը կը հասկնանք:

- Երուսաղէմի միջնաբերդը, որ քաղաքին ամենէն հին մասն է եւ գոր Դաւիթ գրաւեց Յերուսաղիներէն (Բ.Թ.գ 5.7-9):

32.- Որո՞նք էին մաքսաւորները:

- Ասոնք տուրք գանձող պաշտօնեաներ էին, որոնք մանչցուած էին Հոռոմայեցիներու գործակատարներ իբրեւ:

33.- Ի՞նչ պէտք է հասկնալ «երէց» կամ «ծեր» ըսելով:

- Հին Կտակարանի մէջ «երէց» կամ «ծեր» ըսելով չի հասկցուիր մեծ տարիք ունեցող մարդիկը, այլ՝ ցեղերու ու

գերդաստաններու պետերը, որոնք ժողովուրդին դատերը տեսնելու պարտականութիւնը ունէին:

34.- Որո՞նք էին Եբրայեցիներուն գլխաւոր տօները:

1.- Զատիկ եւ Բաղարջակերք:

2.- Պենտէկոստէ կամ Հունձֆերու տօն:

3.- Փող հնչեցնելու տօն կամ նոր տարի:

4.- Քաւութեան օր:

5.- Տաղաւարահարաց կամ բերֆահաւաքի տօն:

6.- Նաւակատիք:

35.- Որո՞նց կողմէ կը ղեկավարուէր Պաղեստինը Քրիստոսի ժամանակ:

- Կը ղեկավարուէր Հոռմէն նշանակուած կուսակալներու ձեռքով:

36.- Ի՞նչ կը կոչուէր հրեաներու «Գերագոյն Ատեան»ը կամ «Բարձրագոյն ժողով»ը:

- Սինետրիոն (Յունարէն բառ մըն է):

37.- Ո՞վ կը նախագահէր «Գերագոյն Ատեանին»:

- Օրուան քահանայապետը:

38.- Ի՞նչ էր գործը Սինետրիոնին:

- «Ազգային եւ կրօնական կարեւոր հարցեր կամ դատեր վճռել»:

39.- Որո՞նք կը կազմէին Սինետրիոնը:

ա.- Կրօնաւորներ (Սադուկեցիներ)

բ.– Աշխարհականներ (Փարիսեցիներ)

գ.– Օրենքի ուսուցիչներ (դպիրներ)

դ.– Օրուան ֆահանայապետը:

40.– Քանի՞ անգամներ է կը բաղկանար Սինետրիոնը:

– 70 անգամներ է:

41.– Սինետրիոնը իրաւունք ունէ՞ր մահուան վնիւ
արձակելու:

– Ո՛չ (Յհ 18.31):

42.– Որո՞նք են հրեղէն մարմիններուն 9 աստիճան-
ները:

– Հրեղէն մարմինները կը բաժնուին երեք դասի, եւ
իւրաքանչիւր դաս՝ երեք աստիճանի.–

– Առաջին դասը.–

1.– Աթոռները

2.– Քերովբէները

3.– Սերովբէները

– Երկրորդ դասը.–

4.– Տէրութիւնները

5.– Զօրութիւնները

6.– Իշխանութիւնները

– Երրորդ դասը.–

7.– Պետութիւնները

8.– Հրեշտակապետները

9.– Հրեշտակները

43.- Յիշեցէ՛ք մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի վերջին խօսքը երկրի վրայ իր յարութեանէն ետք:
- «Այո՛, շուտով կու գամ» (Յյտ 22.20):

44.- Ո՞վ եղաւ առաջին անձը որ դրախտ մտաւ Տէր Յիսուսի արիւնով:
- Յիսուսի աջ կողմը խաչուող աւագակը, որուն Յիսուս ըսաւ.- «Վստահ եղի՛ր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (Ղկ 23.43):

21.- Տուէ՛ք իմաստը հետեւեալ բառերուն:

1.- Ի՞նչ կը նշանակէ «Յիսուս»:

- Տէրը կը փրկէ:

2.- Ի՞նչ կը նշանակէ «Քրիստոս»:

- Օծեալ:

3.- Ի՞նչ կը նշանակէ «Մեսիա»:

- Առնուած է Եբրայերէն՝ Մաշիահ բառէն, եւ կը նշանակէ՝ «Օծեալ»:

4.- Ի՞նչ կը նշանակէ «Ամէն»:

- Թող ըլլա՛յ, թող այնպէ՛ս ըլլայ, նշմարտապէս:

5.- Ի՞նչ կը նշանակէ «Ալէլուիա»:

- Օրհնեցէ՛ք Տէրը, փառաբանեցէ՛ք Տէրը:

- 6.- Ի՞նչ կը նշանակէ «Էմմանուէլ»:
- Աստուած մեզի հետ:
- 7.- Ի՞նչ կը նշանակէ «Մատթէոս»:
- Աստուծոյ պարգեւը:
- 8.- Ի՞նչ կը նշանակէ «Մարկոս»:
- Փայլող, Լատիներէնի մէջ՝ լայն մուրն:
- 9.- Ի՞նչ կը նշանակէ «Ղուկաս»:
- Լուսատու, այսինքն՝ լոյս տուող:
- 10.- Ի՞նչ կը նշանակէ «Յովհաննէս»:
- Աստուած շնորհիք ցուցաբերեց:
- 11.- Ի՞նչ կը նշանակէ «Աբրահամ»:
- Հայր բազմութեան:
- 12.- Ի՞նչ կը նշանակէ «Մովսէս»:
- Զուրէն հանուած:
- 13.- Ի՞նչ կը նշանակէ «Եսայեայ»:
- Եհովան փրկեց:
- 14.- Ի՞նչ կը նշանակէ «Երեմեայ»:
- Եհովան կը հաստատէ, կը պահպանէ:
- 15.- Ի՞նչ կը նշանակէ «Եզեկիէլ»:
- Աստուած կը զօրացնէ, կամ՝ Աստուած հզօր է:
- 16.- Ի՞նչ կը նշանակէ «Դանիէլ»:
- Աստուած իմ դատաւորս է:

17.- Ի՞նչ կը նշանակէ «Եղիսէ»:

- Աստուած փրկութիւն է:

18.- Ի՞նչ կը նշանակէ «Եղիա»:

- Իմ Աստուածս՝ Եհովան է:

19.- Ի՞նչ կը նշանակէ «Դաւիթ»:

- Սիրելի:

20.- Ի՞նչ կը նշանակէ «Մարիամ»:

- Դառնութիւն:

21.- Ի՞նչ կը նշանակէ «Սօդոս»:

- Հարցուած [Աստուծմէ]:

22.- Ի՞նչ կը նշանակէ «Պօղոս»:

- Պատիկ:

23.- Ի՞նչ կը նշանակէ «Գաբրիէլ»:

- Աստուծոյ մարդը, Աստուծոյ այրը:

24.- Ի՞նչ կը նշանակէ «Միֆայէլ»:

- Ո՞վ է Աստուծոյ նման:

25.- Ի՞նչ կը նշանակէ «Սատանայ»:

- Հակառակորդ, չարախօս:

26.- Ի՞նչ կը նշանակէ «Հրեշտակ»:

- Պատգամաբեր, դեսպան:

27.- Ի՞նչ կը նշանակէ «Շաբաթ»:

- Հանգիստ, դադար:

28.- Ի՞նչ կը նշանակէ «Առաքեալ»:
- Ղրկուած:

29.- Ի՞նչ կը նշանակէ «Պետրոս»:
- Ժայռ:

30.- Ի՞նչ կը նշանակէ «Անդրէաս»:
- Քաջ, քաջութիւն:

31.- Ի՞նչ կը նշանակէ «Յակոբ»:
- Խաբող:

32.- Ի՞նչ կը նշանակէ «Փիլիպպոս»:
- Ձիեր սիրող:

33.- Ի՞նչ կը նշանակէ «Բար-Թողովէոս»:
- Թողովէոսի որդի:

34.- Ի՞նչ կը նշանակէ «Թովմաս»:
- Երկուորեակ:

35.- Ի՞նչ կը նշանակէ «Սիմոն»:
- Լսելիք, լսել:

36.- Ի՞նչ կը նշանակէ «Թադէոս»:
- Սրտի մարդ:

37.- Ի՞նչ կը նշանակէ «Յուդա»:
- Գոհութիւն:

38.- Ի՞նչ կը նշանակէ «Տիմոթէոս»:
- ԶԱստուած պաշտող, պատուող:

39.- Ի՞նչ կը նշանակէ «Տիտոս»:

- Պատուաւոր:

40.- Ի՞նչ կը նշանակէ «Սամուէլ»:

- Աստուծոյ լսածը:

41.- Ի՞նչ կը նշանակէ «Եկեղեցի»:

- Աստուծոյ հաւատացողներու բազմութիւն:

22.- Ընտրեցէ՛ք շիտակ պատասխանը:

1.- Ո՞վ էր այն մարգարէն որ թագաւոր ըլլալէ առաջ հովիւ էր:

- Ամասիա (Դ.Թգ 14.3):

- Դաւիթ (Ա.Թգ 16.10):

2.- Ո՞վ էր այն մարգարէն որ չոր ջրհորի մը մէջ նետուեցաւ:

- Եսայի (Ես 18.3):

- Երեմիա (Եր 38.6):

3.- Ո՞վ էր այն մարգարէն որուն իսուֆին գորութեամբ Պաղեստինի վրայ երեք ու կէս տարի անձրեւ չտեղաց:

- Եղիսէ (Դ.Թգ 2.19):

- Եղիա (Յկ 5.17: Գ.Թգ 17.1):

4.- Ո՞վ էր այն կառավարիչը որ նախաձեռնեց Երուսաղեմի պարիսպներու վերաշինութեան աշխատանքին:

- Եզրաս (Եզր 1-2):
- Նեհեմիա (Նե 1-2):

5.- Ո՞վ էր այն մարգարէն որուն միջոցաւ Աստուած կոչ ուղղեց հրեայ ժողովուրդին 587-ին քանդուած տաճարը վերակառուցելու:

- Սոփոնիա (Սոփ 3.1-2):
- Անգէա (Անգ 1.1-11):

6.- Ո՞վ էր այն մարգարէն որ երեք տարի մերկ շրջեցաւ:

- Եսայի (Ես 20.1-3):
- Եզեկիէլ (Եզ 24.2-3):

7.- Ո՞վ էր այն մարգարէն որ կերակրուեցաւ ագռաւներու կողմէ:

- Եղիա (Գ.Թգ 17.6):
- Եղիսէ (Դ.Թգ 4.19):

8.- Ո՞վ էր այն մարգարէն որ իր գաւազանը դէպի Կարմիր ծովը երկնցուց եւ գայն նեղեց:

- Մովսէս (Ել 14.15-22):
- Դանիէլ (Դն 2.12-23):

9.- Ո՞վ էր այն մարգարէն որ կերակուր մը կերաւ եւ իր կերած կերակուրին ուժովը քառասուն օր քալեց մինչեւ իր հասնիլը Քորեբ լեռ:

- Եղիա (Գ.Թգ 19.7-8):
- Մովսէս (Ել 5.22-23):

10.- Ո՞վ էր այն դատաւորը որուն գորութիւնը իր մագերուն մէջ կը կայանար:

- Սամփսոն (Դտ 16.15-20):
- Գեղէօն (Դտ 7.2):

11.- Ո՞վ էր այն թագաւորը որ ջարդել տուաւ 85 քահանաներ:

- Սաւուղ (Ա.թգ 22.18):
- Ա.ֆաար (Գ.թգ 18.19):

12.- Ո՞վ էր այն թագաւորը որ դառնապէս լացաւ ու աղօթեց իր հիւանդ զակի առողջութեան համար:

- Սեղեկիա (Դ.թգ 24.18-20):
- Դաւիթ (Բ.թգ 12.15-19):

13.- Ո՞վ հիմնեց Երուսաղէմի տաճարը 966-ին:

- Արիստղոմ (Բ.թգ):
- Սողոմոն (Գ.թգ 6):

14.- Ո՞վ էր այն թագաւորը որուն անհնազանդութեան պատճառով՝ Աստուծոյ Հոգին հեռացաւ իրմէ եւ չար ոգիներ եկան եւ սկսան գիմֆ նեղել:

- Սաւուղ (Ա.թգ 16.14):
- Յովրամ (Դ.թգ 8.19):

15.- Ո՞վ էր այն մարգարէն որ առիւծներու գուրին մէջ նետուեցաւ:

- Սոփոնիա (Սփ 2.1-3):
- Դանիէլ (Դն 6.16-22):

16.- Որո՞նք էին այն ֆաղաֆները որոնց վրայ Աստուած երկինքէն «ծծումք ու կրակ» տեղացուց :

- Սողոմ ու Գոմոր (Մն 19.24):
- Երիֆով եւ Գայի (Յես 6-8):

17.- Ո՞վ էր այն մարգարէն որ երբ իր աներոջ հօտը կ'արածէր, մորենի մը տեսաւ որ կրակով կը վառէր բայց չէր սպառեր:

- Մովսէս (Ել 3.1-3):
- Եզեկիէլ (46.13-15):

18.- Ե՞րբ Աստուած երկինքէն Մանանա տուաւ Իսրայէլի ժողովուրդին:

- Երբ Եգիպտոսի մէջ էին (Ել 1):
- Երբ Սինայի անապատին մէջ էին (Ել 16):

19.- Ո՞վ էր այն մարգարէն որ իր ձեռքի գաւազանով գարկաւ Քորեբի մէջ ժայռի մը, եւ այդ ժայռէն ջուր բղխեցաւ:

- Եսայի (43.8):
- Մովսէս (Ել 17.6):

20.- Ո՞վ էր այն մարգարէն որ իր վերարկուն գարկաւ Յորդանանի ջուրերուն եւ ջուրերուն մէջ ցամաք քամբայ բացուեցաւ:

- Եղիա (Դ.Թգ 2.8):
- Մովսէս (Ել 12.5):

21.- Ո՞վ էր այն մարգարէն որ Տիրոջ աղաղակեց եւ արեւին «ստուերը տասը աստիճան ետ դարձուց»:

- Եսայի (Դ.Թգ 20.8-11):
- Երեմիա (9.1):

22.- Ո՞վ էր այն թագաւորը որ երբ գոհեր մատուցանեց Տիրոջ, *«Երկինքէն կրակ իջաւ եւ ողջակէզներն ու գոհերը լափեց»*:

- Եզեկիա (Բ.Մն 31.11):

- Սողոմոն (Բ.Մն 7.1):

23.- Ո՞վ էր այն առաքեալը որ Յոպպէի մէջ յարութիւն տուաւ Տաբիթա (Այծեմնիկ) անունով կնոջ մը:

- Պետրոս (Գրծ 9.36-43):

- Պօղոս (Գրծ 9.36-43):

24.- Ո՞վ էր այն առաքեալը որ Լիստրայի մէջ բժշկեց ծնունդով կաղ մարդ մը:

- Պօղոս (Գրծ 14.8-11):

- Պետրոս (Գրծ 14.8-11):

25.- Ո՞վ էր այն առաքեալը որ Տրովադայի մէջ կենդանացուց երրորդ յարկէն վար ինկող ու մեռնող Եւտիֆէս անունով երիտասարդ մը:

- Պօղոս (Գրծ 20.7-12):

- Պետրոս (Գրծ 20.7-12):

23.- Բացատրեցէ՛ք հետեւեալ բառերը:

1.- Աստուած:

- Մեր Եկեղեցւոյ Հայրերէն՝ Խոսքով Անձեւացի, Ներսէս Լամբրոնացի եւ Յովհաննէս Վանական, կը բացատրեն որ «Աստուած» բառը բաղկացած է «աստ էած» բառերէն, որ Գրաբարի մէջ կը նշանակէ «այստեղ բերող», այլ իսուֆով՝ մեզ գոյութեան բերող, ստեղծող:

2.- Իսրայել:

- Եբրայերեն լեզուի մէջ «իսրա» կը նշանակէ՝ պայֆար, իսկ «ել» կը նշանակէ՝ Աստուած: Այս իմաստով, Իսրա-յել, կը նշանակէ՝ «ան կը պայֆարի Աստուծոյ հետ», կրնայ նաեւ նշանակել՝ «Աստուած կը պայֆարի»:

3.- Քերովբէ:

- Եբրայերենի մէջ քերովբէ բառը «չեր-իւ-պիմ» բառն է, իսկ՝ չեր-իւ-պիմ կը նշանակէ՝ «գահը կրող», կամ՝ «գահին շուրջ», կամ՝ «կառքը կրող» կամ՝ «կառքին շուրջ»: Ասիկա ցոյց կու տայ քերովբէներուն Աստուծոյ գահին շուրջ ըլլալը:

4.- Սերովբէ:

- Եբրայերեն «սերաֆիմ» բառէն յառաջ եկած է եւ կը նշանակէ՝ «հրեղէններ»:

5.- Սադուկեցի:

- Եբրայերենի մէջ «ցատտիֆիմ» իսկ Յունարէնի մէջ «Սատտուֆ» բառն է եւ կը նշանակէ «արդարներ»:

6.- Փարիսեցի:

- Եբրայերենի մէջ կը նշանակէ՝ «բաժնուածներ, գատուածներ»: Այդպէս կը կոչուէին որովհետեւ ժողովուրդէն կը բաժնուէին կամ կը գատուէին ծիսական արարողութիւններով:

7.- «Շեովա»:

- Այն խորհրդաւոր անունն է, որ Աստուած ինք Մովսէսին յայտնեց (Ելք 3.15-16) եւ սովորաբար կը թարգմանուի՝ «Տէր»:

8.- էլ:

- Եբրայերենի մէջ կը նշանակէ՝ «Աստուած»:

9.- «Հինաւորցը»:

- Արամերէն՝ «Աթիֆ եոմին», որ կը գտնենք Դանիէլի գիրքին մէջ (Դն 7.9, 13, եւ 22): Նկարագրական անուն մըն է, որ ցոյց կու տայ Աստուծոյ յաներժութիւնը, յաւիտենականութիւնը:

10.- Զատիկ:

- Նոր Կտակարանի մէջ Զատիկի տօնը կը կոչուի՝ «Պասեֆ» (Եբրայերէնը՝ Փեսախ), եւ կը նշանակէ՝ անցնիլը, անցքը, եւ կը նշէ Աստուծոյ հրեշտակին անցնիլը Եգիպտոսէն՝ հարուածելու համար անոնց անդրանիկները:

11.- «Սանհետրին»:

- Կը հնչուի նաեւ՝ «Սանհետրիմ»: Եբրայերէն բառ մըն է որ առնուած է Յունարէն «Սինետրիոն» բառէն եւ կը նշանակէ՝ «խորհուրդ», ժողով իմաստով:

12.- Սինակոկ:

- Յունարէնի մէջ կը նշանակէ՝ «ժողովարան»:

13.- Մատաղ:

- Մեր Եկեղեցւոյ հայրերէն՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացի կը բացատրէ որ «Մատո՛» Գրաբարի մէջ կը նշանակէ՝ «Մատուցէ՛, նուիրէ՛», իսկ «Աղ»ը մեր գիտցած աղն է: Ուրեմն, «Մատո՛ աղ» կամ «Մատաղ» կը նշանակէ՝ «Աղ մատուցէ, աղ նուիրէ»:

14.- Հերիսէ:

- Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Յիսուսի անունով մկրտել է սոֆ Տրդատ թագաւորն ու միւս պալատականները, կը պատուիրէ որ ոչխարներ բերեն, մորթեն, կաթսաներու մէջ եփեն, եւ բաժնեն աղատներուն: Երբ Սուրբ Գրիգորը կը տեսնէ որ ոչխարները եփուեցան, կը դառնայ իշխաններուն եւ կ'ըսէ. «Հարէ՛ք ըզսա»:

«Հարէ՛ք» կը նշանակէ՝ «զարկէ՛ք, ծեծեցէ՛ք», իսկ «ըզսա» կը նշանակէ՝ «ասիկա»: Ժամանակի ընթացքին «Հարէ՛ք ըզսա» բառերը կամաց-կամաց փոխուելով եղած է՝ «Հարիսա»:

15.- Գեհեն:

- Այս բառը յառաջ եկած է Եբրայերէն՝ «Գե-Հիննում» բառէն, եւ կը նշանակէ՝ Հիննումի Զոր: Այս ձորը կը գտնուէր Երուսաղէմի հարաւը եւ Հին Կտակարանեան ժամանակաշրջանին կը գործածուէր իբրեւ երեխաներու զոհավայր (Դ.Թ՛գ 23.10), իսկ Քրիստոսի ժամանակ՝ իբրեւ աղբավայր:

16.- Սատանայ:

- Այս բառը յառաջ եկած է Եբրայերէն՝ «Սադան» բառէն, եւ կը նշանակէ՝ հակառակորդ, ընդդիմադիր, նաեւ՝ արգելիք, խոչընդոտ:

17.- Երուսաղէմ:

- Եբրայերէնի մէջ կը նշանակէ՝ «Հիմ խաղաղութեան» կամ՝ «Խաղաղութեան տիրապետութիւն»:

18.- Ովսաննա:

- ԶԱստուած օգնութեան կանչելու բացազանչութիւն մըն է, եւ կը նշանակէ՝ «Փրկէ՛, կ'աղաչեմք», կամ՝ «Հի՛մա փրկէ»:

19.- Աստուածաշունչ:

- Կը նշանակէ՝ Աստուծոյ շունչով [գրուած Սուրբ Գիրքերը]: «Աստուծոյ շունչ» ըսելով կը հասկնանք՝ «Սուրբ Հոգին»: Եբրայերէնի մէջ Սուրբ Հոգին կը կոչուի՝ «Պրօ Հա ֆատէշ», որ կը նշանակէ՝ «Կենդանութեան շունչը»: Այս իմաստով, երբ կ'ըսենք՝ «Աստուածաշունչ», կը հասկնանք՝ «Աստուծոյ Սուրբ Հոգին», որովհետեւ Սուրբ Հոգին ի՛նքն է Աստուծոյ կենդանութեան շունչը, այն կենդանութեան շունչը՝ որ Աստուած փչեց մարդուն ռնգունքներէն *«ու մարդը կենդանի հոգի եղաւ»* (Ծն 2.7):

Հեղինակին ամբողջական գործերը

- 1.- Ճշմարիտ վերածնունդը
- 2.- Բա՛ց սրտիդ դուռը, Յիսուս կը սպասէ
- 3.- Ես եմ շամբան, Ճշմարտութիւնը եւ Կեանքը
- 4.- Մանուկներուն Արքայութիւնը
- 5.- Ամենօրեայ անում Աստուծոյ Հոգիով եւ Խօսքով
- 6.- Աստուածաշունչին պատասխանները
ժողովուրդի հարցումներուն
- 7.- Աստուածաշունչին պատգամը այսօրուան մարդուն
- 8.- Գիտնանք պատասխանները որոշ հարցումներու
- 9.- Ամենօրեայ հոգեւոր ուսուցում
- 10.- Մեր հոգը Աստուծոյ ձգել
- 11.- Հաւատացեալները վարդերն են արքայութեան
- 12.- Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի առակներուն
բացատրութիւնը (Ա. հատոր)
- 13.- 62 հարցումներ եւ անոնց պատասխանները
- 14.- Ճանչնանք Աստուածաշունչը
հարցումներու միջոցաւ
(գարգացման մրցումի համար)